**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2024 թվականի թիվ 902-Ա

## «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ», «ՖԼԵՇ», «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ««ՄԱՔՍ ՕԻԼ» ՈՒ «ԿԱՄՕՅԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի դեկտեմբերի 10-ի նիստում, քննարկելով «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և ««Մաքս Օիլ» «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ» անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

***1. Վարույթի հարուցման հիմքի նկարագրություն.***

Հանձնաժողովի համակենտրոնացումների, պետական օժանդակության գնահատման և շուկաների վերլուծության վարչությունը (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) 2024 թվականի հունիսի 10-ի թիվ ՄՊՀ-006449/10-06-2024 զեկուցագրով (այսուհետ նաև՝ **Զեկուցագիր**), ի թիվս այլնի, առաջարկել է «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» ընկերությունների (այսուհետ նաև՝ **Ընկերություններ**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ՝ Ընկերությունների կողմից 2022 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում հակամրցակցային համաձայնության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով: Մասնավորապես, ըստ Պատասխանատու ստորաբաժանման, տարբեր ծախսային կառուցվածքի պայմաններում գնային քաղաքականության, ներառյալ՝ գնի բարձրացման, իջեցման, պահպանման, բարձր և

ցածր գնի կիրառման առնչությամբ վարքագիծը առերևույթ կարող է պարունակել հակամրցակցային համաձայնության հատկանիշներ:

Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 11-ի ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 254-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-02533/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Թիվ ՀԳ-02533/24 վարույթ**):

Թիվ ՀԳ-02533/24 վարույթը հարուցվել է 2022 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունների վարքագծում հակամրցակցային համաձայնության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները համապատասխանաբար 2024 թվականի հուլիսի 17-ին, հուլիսի 12-ին, հուլիսի 29-ին և հուլիսի 29-ին ներկայացրել են դիրքորոշում: «Մեգա Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

Վարույթի շրջանակներում.

1. 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ 008357 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 008357 գրություն**) «Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ նաև՝ **«Ֆլեշ» ընկերություն**) է ուղարկվել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Ֆլեշ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, որի վերաբերյալ «Ֆլեշ» ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

2. 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ 008359 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 008359 գրություն**) «Սի Փի Էս Էներջի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ նաև՝ **«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերություն**) է ուղարկվել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը որի վերաբերյալ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի օգոստոսի 2-ին ներկայացրել է դիրքորոշում:

3. 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ 008360 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 008360 գրություն**) «Մեգա Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ նաև՝ **«Մեգա Թրեյդ» ընկերություն**) է ուղարկվել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Մեգա Թրեյդ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, որի վերաբերյալ «Մեգա Թրեյդ» ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

4. 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ 008361 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 008361 գրություն**) «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ նաև՝ **«Մաքս Օիլ» ընկերություն**) է ուղարկվել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Մաքս Օիլ» ընկերության

ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, որի վերաբերյալ «Մաքս Օիլ» ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

5. 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ 008362 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 008362 գրություն**) «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ նաև՝ **«Կամօյլ» ընկերություն**) է ուղարկվել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Կամօյլ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, որի վերաբերյալ «Կամօյլ» ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

2024 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 13862 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 13862 գրություն**) «Ֆլեշ» ընկերությանը, թիվ 13856 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 13856 գրություն**) «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությանը, թիվ 13865 գրությամբ (այսուհետ նաև՝ Թիվ 13865 գրություն) «Մեգա Թրեյդ» ընկերությանը, թիվ 13859 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 13859 գրություն**) «Մաքս Օիլ» ընկերությանը և թիվ 13861 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 13861 գրություն**) «Կամօյլ» ընկերությանն է ուղարկել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը, որի առնչությամբ «Ֆլեշ» ընկերությունը, «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը, «Մաքս Օիլ» ընկերությունը և «Կամօյլ» ընկերությունը համապատասխանաբար 2024 թվականի դեկտեմբերի 5-ին, դեկտեմբերի 4-ին, դեկտեմբերի 5-ին և դեկտեմբերի 5-ին ներկայացրել են դիրքորոշումներ: «Մեգա Թրեյդ» ընկերությունը դիրքորոշում չի ներկայացրել:

***2. Վարույթով պատասխանողների դիրքորոշումները.***

***2.1 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիրքորոշումը.***

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 17-ին ներկայացրել է դիրքորոշում Վարույթի վերաբերյալ՝ նշելով հետևյալը.

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի օգոստոսի 2-ի գրությամբ Վարույթի շրջանակներում ներկայացրել է դիրքորոշում Պատասխանատու ստորաբաժանման կողմից իրականացված վերլուծության առնչությամբ՝ նշելով հետևյալը.

Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 4-ին «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունից ստացել է դիրքորոշում Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի առնչությամբ:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը նշել է հետևյալը.

***2.2 «Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիրքորոշումը.***

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 12-ին ներկայացրել է դիրքորոշում Թիվ ՀԳ-02533/24 վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ՝ նշելով հետևյալը.

1. «Ֆլեշ» ընկերությունը «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» ՍՊ ընկերությունների հետ ապրանքի գների բարձրացման, իջեցման, պահպանման վերաբերյալ, ինչպես նաև մրցակցությունը սահմանափակող այլ հանգամանքների վերաբերյալ որևէ գրավոր կամ բանավոր համաձայնություն, պայմանավորվածություն չունի: «Ֆլեշ» ընկերության կողմից ներմուծվող ապրանքների իրացման գները «Ֆլեշ» ընկերությունը սահմանում է միանգամայն ինքնուրույն՝ սահմանափակված չլինելով որևէ պայմանավորվածությամբ կամ համաձայնությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին «Ֆլեշ» ընկերությունից ստացել է դիրքորոշում Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի առնչությամբ:

«Ֆլեշ» ընկերությունը հայտնել է, որ.

1. «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ ապրանքի գների բարձրացման, իջեցման, պահպանման վերաբերյալ, ինչպես նաև մրցակցությունը սահմանափակող այլ հանգամանքների վերաբերյալ «Ֆլեշ» ընկերությունը որևէ գրավոր կամ բանավոր համաձայնություն, պայմանավորվածություն չունի և չի ունեցել: Ներմուծվող ապրանքների իրացման գները «Ֆլեշ» ընկերությունը սահմանում է միանգամայն ինքնուրույն, սահմանափակված չլինելով որևէ պայմանավորվածությամբ

կամ համաձայնությամբ: Ապրանքների գները սահմանվում են, բարձրացվում կամ իջեցվում են բացառապես տնտեսական գործոններով պայմանավորված, իսկ այդպիսի գործոնները տարբեր են:

***2.3 «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիրքորոշումը.***

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 29-ի գրությամբ ներկայացրել դիրքորոշում Թիվ ՀԳ-02533/24 վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ՝ նշելով հետևյալը.

1. «Մաքս Օիլ» ընկերությունը որևէ տնտեսավարող սուբյեկտի հետ հակամրցակցային համաձայնության վերաբերյալ որևէ գործարք, բանավոր կամ գրավոր համաձայնություն չի կնքել, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողություններ կամ վարքագիծ չի դրսևորել, տնտեսավարող սուբյեկտների որևէ միավորման մաս չի կազմել և հակամրցակցային համաձայնության վերաբերյալ որևէ որոշում չի ընդունել:

2. «Մաքս Օիլ» ընկերությունը «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ չէր էլ կարող հակամրցակցային համաձայնության վերաբերյալ որևէ գործարք, բանավոր կամ գրավոր համաձայնություն կնքել, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված

գործողություններ կամ վարքագիծ դրսևորել, տնտեսավարող սուբյեկտների որևէ միավորման մաս կազմել և հակամրցակցային համաձայնության վերաբերյալ որևէ որոշում ընդունել, քանի որ «Մաքս Օիլ» ընկերությունը և Թիվ ՀԳ-02533/24 վարույթի մասնակից հանդիսացող մնացյալ տնտեսավարող սուբյեկտները ավտոմոբիլային բենզինի ապրանքային շուկայում հանդիսանում են մրցակից կազմակերպություններ:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին դիրքորոշում է ներկայացրել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի առնչությամբ:

Այսպիսով՝ «Մաքս Օիլ» ընկերությունը հայտնել է, որ որևէ տնտեսվարող սուբյեկտի հետ հակամրցակցային համաձայնության վերաբերյալ որևէ գործարք, բանավոր կամ գրավոր համաձայնություն չի կնքել, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողություններ կամ վարքագիծ չի դրսևորել, հակամրցակցային համաձայնության վերաբերյալ որևէ որոշում չի ընդունել:

Ավելին, «Մաքս Օիլ» ընկերությունը կրկին նշում է, որ նման համաձայնություն չէր էլ կարող կայացվել, քանի որ «Մաքս Օիլ» ընկերությունը ու վարույթի մասնակից հանդիսացող մնացյալ տնտեսվարող սուբյեկտները բենզինի ապրանքային շուկայում հանդիսանում են մրցակից կազմակերպություններ, իսկ որևէ տեսակի

հակամրցակցային համաձայնություն կնքելը չի բխում ո՛չ «Մաքս Օիլ» ընկերությունը և ո՛չ էլ վարույթի մասնակից մնացած տնտեսվարող սուբյեկտների շահերից:

***2.4 «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիրքորոշումը.***

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 29-ի գրությամբ ներկայացրել է դիրքորոշում Թիվ ՀԳ-02533/24 վարույթի շրջանակներում՝ հայտնելով հետևյալը.

1. «Կամօյլ» ընկերությունը զբաղվում է հիմնականում բենզինի մանրածախ իրացմամբ, իսկ ներմուծմամբ չի զբաղվում: Ինչից ելնելով «Կամօյլ» ընկերությունը նշում է, որ «Կամօյլ» ընկերությունը «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ հակամրցակցային որևէ համաձայնության չէր կարող գալ:

2. «Կամօյլ» ընկերությունը որևէ տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ Թիվ ՀԳ-02533/24 վարույթով ներառված սուբյեկտների հետ որևէ համաձայնության չի եկել, չի կնքել հակամրցակցային համաձայնություն և առհասարակ Օրենքով սահմանված որևէ եղանակով հակամրցակցային համաձայնության չի եկել:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին դիրքորոշում է ներկայացրել Պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի առնչությամբ:

«Կամօյլ» ընկերությունը նշել է, որ վարույթի մասնակից այլ սուբյեկտների հետ որևէ հակամրցակցային համաձայնության չի եկել, չի կնքել հակամրցակցային համաձայնություն և առհասարակ Օրենքով սահմանված որևէ եղանակով «հակամրցակցային համաձայնության» չի եկել:

***<u>3. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 541-Ա, թիվ 542-Ա, թիվ 543-Ա և թիվ 544-Ա որոշումներով «Մաքս Օիլ», «Ֆլեշ», «Սի Փի Էս Էներջի Գրուպ» և «Մեգա Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցված համապատասխանաբար թիվ ՀԳ-04801/23 (այսուհետ՝ **Թիվ ՀԳ-04801/23**), թիվ ՀԳ-04799/23 (այսուհետ՝ **Թիվ ՀԳ-04799/23**), թիվ ՀԳ-04798/23 (այսուհետ՝ **Թիվ ՀԳ-04798/23**) և թիվ ՀԳ-04800/23 (այսուհետ՝ **Թիվ ՀԳ-04800/23**) վարույթներում առկա կցվել են Թիվ ՀԳ-02533/24 վարույթին:

***3.1 «Ֆլեշ» ընկերություն.***

Հանձնաժողովը բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակում 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ 007175 գրությամբ դիմել է «Ֆլեշ» ընկերությանը՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1. «Ֆլեշ» ընկերության 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ նաև՝ **Հաշվետու ժամանակահատված**) բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

2. Հաշվետու ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերությանը բենզին և դիզելային վառելիք մատակարարող ընկերությունների վերաբերյալ՝ (տարեկան մատակարարման բնեղեն ծավալներով առավել խոշոր 5 մատակարարների մասով) համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

3. Հաշվետու ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության կողմից իրացված բենզինի և դիզելային վառելիքի վրա կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

4. Հաշվետու ժամանակահատվածում բենզինի մեծածախ մատակարարման նպատակով 10 խոշոր տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

«Ֆլեշ» ընկերությունը 2023 թվականի օգոստոսի 30-ին ներկայացրել է Թիվ 007175 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը Թիվ ՀԳ-04799/23 վարույթի շրջանակում գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով.

1. 2024 թվականի փետրվարի 2-ի թիվ 001191 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 001191 գրություն**) դիմել է «Ֆլեշ» ընկերությանը՝ 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը:

1.1 «Ֆլեշ» ընկերության 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ նաև՝ **Դիտարկվող ժամանակահատված**) բենզինի ձեռքբերման նպատակով ԵԱՏՄ-ի և երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.2 Դիտարկվող ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության համար ԵԱՏՄ-ից և երրորդ երկրներից բենզինի ձեռքբերման նպատակով միջնորդ հանդիսացող (փոխադրման, էքսպեդիտորական և այլ ծառայություններ մատուցող) ընկերությունների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.3 «Ֆլեշ» ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բենզինի (ԵԱՏՄ-ից և Երրորդ երկրներից) ներմուծման բոլոր փաստաթղթերի պատճենները (բեռնամաքսային հայտարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն):

1.4 Դիտարկվող ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության կողմից բենզինի (ըստ տեսակների ԱԻ-92, ԱԻ-95 և ԱԻ-98) և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևանմուշում առկա որոշակի տեղեկատվություն «Ֆլեշ» ընկերությունը Դիտարկվող ժամանակահատվածի համար արդեն իսկ ներկայացրել է Հանձնաժողով, ուստի, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը խնդրել է ճշգրտել ուղարկված տեղեկատվությունը կամ գրությամբ հաստատել, որ այն վերջնական է և կարող է դիտարկվել **Թիվ ՀԳ-04799/23 վարույթի** ուսումնասիրության շրջանակներում:

1.5 Դիտարկվող ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության կողմից կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

1.6 Դիտարկվող ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության կողմից, ինչպես նաև «Ֆլեշ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով շահագործվող բենզալցակայանների վերաբերյալ, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: «Ֆլեշ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող բենզալցակայանների առկայության դեպքում՝ կցել համապատասխան պայմանագրերի և կից համաձայնագրերի պատճենները:

1.7 «Ֆլեշ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի իրացման գների հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանությունը և այն գործոնները, որոնք Ընկերության կողմից հաշվի են առնվում իրացման գների սահմանման ժամանակ:

1.8 «Ֆլեշ» ընկերության կողմից ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործընթացի և իրացման շղթայի փուլերի մանրամասն նկարագրությունը՝ ներմուծումից մինչև մանրածախ իրացում:

2. 2024 թվականի մարտի 20-ի թիվ 002969 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 002969 գրություն**) դիմել է «Ֆլեշ» ընկերությանը՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

2.1 Դիտարկվող ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության ֆինանսական ծախսերը հիմնավորող բոլոր փաստաթղթերը (ստացված վարկերի և փոխառությունների պայմանագրեր, համաձայնագրեր և այլն):

2.2 **Թիվ 001191 գրության** 5-րդ կետով պահանջված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ «Ֆլեշ» ընկերության՝ Հանձնաժողով ներկայացրած

տեղեկատվության լրամշակված տարբերակը՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով), մասնավորապես նշելով՝

2.2.1 Դիտարկվող ժամանակահատվածում տրված վարկերից, փոխառություններից և ներդրումներից «Ֆլեշ» ընկերության ստացած եկամուտները՝ ամսական կտրվածքով՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը (տրված վարկերի և փոխառությունների պայմանագրեր, համաձայնագրեր և այլն),

2.2.2 Դիտարկվող ժամանակահատվածում այլ ընկերություններում «Ֆլեշ» ընկերության ունեցած շահաբաժիններից ստացված եկամուտները՝ կցելով համապատասխան փաստաթղթերը,

2.2.3 «Ֆլեշ» ընկերության տրանսպորտային ծախսերի բացվածքը՝ ըստ տեսակների (օրինակ՝ երկաթուղային փոխադրման վճար, ավտոմոբիլային փոխադրում, էքսպեդիտորական ծախսեր և այլն)՝ ամսական կտրվածքով՝ Հաշվետու ժամանակահատվածի համար,

2.2.4 «Ֆլեշ» ընկերության վարչական, պահպանման, իրացման, ֆինանսական և այլ ծախսերի բացվածքները՝ յուրաքանչյուրն ըստ առավել խոշոր հինգ հոդվածների՝ ամսական կտրվածքով՝ Դիտարկվող ժամանակահատվածի համար:

2024 թվականի փետրվարի 16-ին «Ֆլեշ» ընկերությունը՝ ի պատասխան **Թիվ 001191 գրության**, Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվության որոշ մասը՝ միաժամանակ մնացյալ տեղեկատվությունը լիարժեք ներկայացնելու նպատակով միջնորդություն է ներկայացրել՝ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի մարտի 5-ը:

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 19-ին թիվ 001648 գրությամբ «Ֆլեշ» ընկերությունից Թիվ 001191 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը ներառյալ:

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել Թիվ 001191 գրությամբ պահանջված տեղեկատվության չներկայացված մասը:

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի մարտի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել Թիվ 001191 գրությամբ պահանջված տեղեկատվության առնչությամբ ճշգրտված տվյալներ:

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի մարտի 25-ին Հանձնաժողով է ներկայացրել Թիվ 002969 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

3. Հանձնաժողովը Թիվ 008357 գրությամբ «Ֆլեշ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Ֆլեշ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Ֆլեշ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 12-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել դիրքորոշում:

4. Հանձնաժողովը Թիվ 13862 գրությամբ «Ֆլեշ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Ֆլեշ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի նոյեմբերի 26-ի գրությամբ խնդրել է երկշաբաթյա ժամկետով երկարաձգել «Ֆլեշ» ընկերության կողմից գրավոր դիրքորոշում ներկայացնելու ժամկետը:

Հանձնաժողովը 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 0014073 գրությամբ «Ֆլեշ» ընկերությանը դիրքորոշում ներկայացնելու համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 5-ը ներառյալ:

«Ֆլեշ» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացրել է դիրքորոշում:

***<u>3.2 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերություն.</u>***

Հանձնաժողովը բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակում 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ 007176 գրությամբ դիմել է «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությանը՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1. Հաշվետու ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

2. Հաշվետու ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությանը բենզին և դիզելային վառելիք մատակարարող ընկերությունների վերաբերյալ (տարեկան մատակարարման բնեղեն ծավալներով առավել խոշոր 5 մատակարարների մասով) համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

3. Հաշվետու ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից իրացված բենզինի և դիզելային վառելիքի վրա կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

4. Հաշվետու ժամանակահատվածում բենզինի մեծածախ մատակարարման նպատակով 10 խոշոր տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ներկայացրել է Թիվ 007176 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը **Թիվ ՀԳ-04798/23 վարույթի** շրջանակում գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով.

1. 2024 թվականի փետրվարի 2-ի թիվ 001192 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 001192 գրություն**) դիմել է «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությանը՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1.1 Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության բենզինի ձեռքբերման նպատակով ԵԱՏՄ-ի և երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.2 Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության համար ԵԱՏՄ-ից և երրորդ երկրներից բենզինի ձեռքբերման նպատակով միջնորդ հանդիսացող (փոխադրման, էքսպեդիտորական և այլ ծառայություններ մատուցող) ընկերությունների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.3 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բենզինի (ԵԱՏՄ-ից և Երրորդ երկրներից) ներմուծման բոլոր փաստաթղթերի պատճենները (բեռնամաքսային հայտարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն):

1.4 Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից բենզինի (ըստ տեսակների Աի-92, Աի-95 և Աի-98) և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևանմուշում առկա որոշակի տեղեկատվություն «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը Դիտարկվող ժամանակահատվածի համար արդեն իսկ ներկայացրել է Հանձնաժողով, ուստի, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը խնդրել է ճշգրտել ուղարկված տեղեկատվությունը կամ գրությամբ հաստատել, որ այն վերջնական է և կարող է դիտարկվել Թիվ ՀԳ-04798/23 վարույթի ուսումնասիրության շրջանակներում:

1.5 Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

1.6 Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից, ինչպես նաև «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով շահագործվող բենզալցակայանների վերաբերյալ, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն ներկայացված թիվ 3

ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող բենզալցակայանների առկայության դեպքում՝ կցել համապատասխան պայմանագրերի և կից համաձայնագրերի պատճենները:

1.7 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի իրացման գների հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանությունը և այն գործոնները, որոնք «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից հաշվի են առնվում իրացման գների սահմանման ժամանակ:

1.8 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործընթացի և իրացման շղթայի փուլերի մանրամասն նկարագրությունը՝ ներմուծումից մինչև մանրածախ իրացում:

2. 2024 թվականի մարտի 20-ի թիվ 002968 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 002968 գրություն**) դիմել է Ընկերությանը՝ 3 աշխատանքային օրվա ընթացում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

2.1 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության 2022 և 2023 թվականների՝ ակտիվների և պասիվների հաշվապահական հաշվեկշիռները՝ համաձայն Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 749-Ն հրամանի Հավելված 1-ի Բաժին 8-ի:

2.2 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության 2022-2023 թվականների ֆինանսական ծախսերի հիմքերը՝ պայմանագրեր, համաձայնագրեր և այլն:

2.3 Թիվ 001192 գրության 5-րդ կետով պահանջված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության լրամշակված տարբերակը՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով), մասնավորապես նշելով՝

2.3.1 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության տրանսպորտային ծախսերի բացվածքը՝ ըստ տեսակների (օրինակ՝ երկաթուղային փոխադրման վճար, ավտոմոբիլային փոխադրում, էքսպեդիտորական ծախսեր և այլն)՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

2.3.2 «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության վարչական, պահպանման, իրացման և ֆինանսական ծախսերի բացվածքները՝ յուրաքանչյուրն ըստ առավել խոշոր հինգ հոդվածների՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 20-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 001192 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը մինչև 2024 թվականի մարտի 5-ը երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 21-ի թիվ 001761 գրությամբ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունից Թիվ 001192 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը ներառյալ:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 28-ին Հանձնաժողով է ներկայացրել Թիվ 001192 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի մարտի 29-ին ներկայացրել է Թիվ 002968 Գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

3. Հանձնաժողովը Թիվ 008359 գրությամբ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 30-ի և 2024 թվականի օգոստոսի 2-ի գրություններով ներկայացրել է դիրքորոշում:

4. Հանձնաժողովը Թիվ 13856 գրությամբ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբերի 4-ին ստացել է «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության դիրքորոշումը:

***3.3 «Մեգա Թրեյդ» ընկերություն***.

Հանձնաժողովը բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակում 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ 007178 գրությամբ դիմել է «Մեգա Թրեյդ» ընկերությանը՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1. Հաշվետու ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

2. Հաշվետու ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերությանը բենզին և դիզելային վառելիք մատակարարող ընկերությունների վերաբերյալ՝ (տարեկան մատակարարման բնեղեն ծավալներով առավել խոշոր 5 մատակարարների մասով) համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

3. Հաշվետու ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից իրացված բենզինի և դիզելային վառելիքի վրա կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

4. Հաշվետու ժամանակահատվածում բենզինի մեծածախ մատակարարման նպատակով 10 խոշոր տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ներկայացրել է Թիվ 007178 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը, Թիվ ՀԳ-04800/23 վարույթի շրջանակներում գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով.

1. 2024 թվականի փետրվարի 2-ի թիվ 001190 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 001190 գրություն**) դիմել է «Մեգա Թրեյդ» ընկերությանը՝ 7 աշխատանքային օրվա ընթացում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1.1 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության բենզինի ձեռքբերման նպատակով ԵԱՏՄ-ի և երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.2 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության համար ԵԱՏՄ-ից և երրորդ երկրներից բենզինի ձեռքբերման նպատակով միջնորդ հանդիսացող (փոխադրման, էքսպեդիտորական և այլ ծառայություններ մատուցող) ընկերությունների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.3 «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բենզինի (ԵԱՏՄ-ից և Երրորդ երկրներից) ներմուծման բոլոր փաստաթղթերի պատճենները (բեռնամաքսային հայտարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն):

1.4 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից բենզինի (ըստ տեսակների Աի-92, Աի-95 և Աի-98) և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևանմուշում առկա որոշակի տեղեկատվություն «Մեգա Թրեյդ» ընկերությունը Դիտարկվող ժամանակահատվածի համար արդեն իսկ ներկայացրել է Հանձնաժողով, ուստի, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը խնդրել է ճշգրտել ուղարկված տեղեկատվությունը կամ գրությամբ հաստատել, որ այն վերջնական է և կարող է դիտարկվել Թիվ ՀԳ-04800/23 վարույթի ուսումնասիրության շրջանակներում:

1.5 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

1.6 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից, ինչպես նաև «Մեգա Թրեյդ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով շահագործվող բենզալցակայանների

վերաբերյալ, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: «Մեգա Թրեյդ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող բենզալցակայանների առկայության դեպքում՝ կցել համապատասխան պայմանագրերի և կից համաձայնագրերի պատճենները:

1.7 «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի իրացման գների հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանությունը և այն գործոնները, որոնք Ընկերության կողմից հաշվի են առնվում իրացման գների սահմանման ժամանակ:

1.8 «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործընթացի և իրացման շղթայի փուլերի մանրամասն նկարագրությունը՝ ներմուծումից մինչև մանրածախ իրացում:

2. 2024 թվականի մարտի 20-ի թիվ 002967 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 002967 գրություն**) դիմել է «Մեգա Թրեյդ» ընկերությանը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

2.1 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության ֆինանսական ծախսերը հիմնավորող բոլոր փաստաթղթերը (ստացված վարկերի և փոխառությունների պայմանագրեր, համաձայնագրեր և այլն):

2.2 Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից կնքված բենզալցակայանների վարձակալության պայմանագրերի, համաձայնագրերի և կից փաստաթղթերի պատճենները:

2.3 Թիվ 001190 գրության 5-րդ կետով պահանջված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ «Մեգա Թրեյդ» ընկերության՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության լրամշակված տարբերակը՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով), մասնավորապես նշելով՝

2.3.1 «Մեգա Թրեյդ» ընկերության տրանսպորտային ծախսերի բացվածքը՝ ըստ տեսակների (օրինակ՝ երկաթուղային փոխադրման վճար, ավտոմոբիլային փոխադրում, էքսպեդիտորական ծախսեր և այլն)՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

2.3.2 «Մեգա Թրեյդ» ընկերության վարչական, պահպանման, իրացման, բենզալցակայանների վարձակալության և շահագործման, ֆինանսական և այլ ծախսերի բացվածքները՝ յուրաքանչյուրն ըստ առավել խոշոր հինգ հոդվածների՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 29-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 001190 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը մինչև 4 աշխատանքային օրով երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 002172 գրությամբ «Մեգա Թրեյդ» ընկերությունից Թիվ 001190 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի մարտի 5-ը ներառյալ:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2024 թվականի մարտի 5-ին (էլ. փոստով) ներկայացրել է Թիվ 001190 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2024 թվականի մարտի 13-ին և 2024 թվականի մարտի 18-ին ներկայացրել է Թիվ 001190 գրությամբ պահանջված տեղեկատվության ճշգրտված տարբերակը:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2024 թվականի մարտի 29-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 002967 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը մինչև 2-3 աշխատանքային օրով երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 1-ի թիվ 003488 գրությամբ «Մեգա Թրեյդ» ընկերությունից Թիվ 002967 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի ապրիլի 3-ը ներառյալ:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2024 թվականի ապրիլի 3-ին ներկայացրել է Թիվ 002967 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

«Մեգա Թրեյդ» ընկերությունը 2024 թվականի ապրիլի 17-ին ներկայացրել է Թիվ 002967 գրությամբ պահանջված տեղեկատվության ճշգրտված տարբերակը:

3. Հանձնաժողովը Թիվ 008360 գրությամբ «Մեգա Թրեյդ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Մեգա Թրեյդ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Մեգա Թրեյդ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

4. Հանձնաժողովը Թիվ 13865 գրությամբ «Մեգա Թրեյդ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Մեգա Թրեյդ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

***<u>3.4 «Մաքս Օիլ» ընկերություն.</u>***

Հանձնաժողովը բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակում 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ 007177 գրությամբ դիմել է «Մաքս Օիլ» ընկերությանը՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1. Հաշվետու ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության բենզինի և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

2. Հաշվետու ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերությանը բենզին և դիզելային վառելիք մատակարարող ընկերությունների վերաբերյալ՝ (տարեկան մատակարարման բնեղեն ծավալներով առավել խոշոր 5 մատակարարների մասով)

համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

3. Հաշվետու ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության կողմից իրացված բենզինի և դիզելային վառելիքի վրա կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

4. Հաշվետու ժամանակահատվածում բենզինի մեծածախ մատակարարման նպատակով 10 խոշոր տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ՝ կցելով համապատասխան պայմանագրերը:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2023 թվականի սեպտեմբերի 1-ին ներկայացրել է Թիվ 007177 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը, Թիվ ՀԳ-04801/23 **վ**արույթի շրջանակներում գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով.

1. 2024 թվականի փետրվարի 7-ի թիվ 001188 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 001188 գրություն**) դիմել է «Մաքս Օիլ» ընկերությանը՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1.1 Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության բենզինի ձեռքբերման նպատակով ԵԱՏՄ-ի և երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.2 Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության համար ԵԱՏՄ-ից և երրորդ երկրներից բենզինի ձեռքբերման նպատակով միջնորդ հանդիսացող (փոխադրման, էքսպեդիտորական և այլ ծառայություններ մատուցող) ընկերությունների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

1.3 «Մաքս Օիլ» ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բենզինի (ԵԱՏՄ-ից և Երրորդ երկրներից) ներմուծման բոլոր փաստաթղթերի պատճենները (բեռնամաքսային հայտարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն):

1.4 Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության կողմից բենզինի (ըստ տեսակների Աի-92, Աի-95 և Աի-98) և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևանմուշում առկա որոշակի տեղեկատվություն «Մաքս Օիլ» ընկերությունը Դիտարկվող ժամանակահատվածի համար արդեն իսկ ներկայացրել է Հանձնաժողով, ուստի, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը խնդրել է ճշգրտել ուղարկված տեղեկատվությունը կամ գրությամբ հաստատել, որ այն վերջնական է և կարող է դիտարկվել Թիվ ՀԳ-04801/23 վարույթի ուսումնասիրության շրջանակներում:

1.5 Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության կողմից կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

1.6 Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության կողմից, ինչպես նաև Ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով շահագործվող բենզալցակայանների վերաբերյալ, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող բենզալցակայանների առկայության դեպքում՝ կցել համապատասխան պայմանագրերի և կից համաձայնագրերի պատճենները:

1.7 «Մաքս Օիլ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի իրացման գների հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանությունը և այն գործոնները, որոնք «Մաքս Օիլ» ընկերության կողմից հաշվի են առնվում իրացման գների սահմանման ժամանակ:

1.8 «Մաքս Օիլ» ընկերության կողմից ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործընթացի և իրացման շղթայի փուլերի մանրամասն նկարագրությունը՝ ներմուծումից մինչև մանրածախ իրացում:

2. 2024 թվականի մարտի 20-ի թիվ 002966 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 002966 գրություն**) դիմել է «Մաքս Օիլ» ընկերությանը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

2.1 Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության ֆինանսական ծախսերը հիմնավորող բոլոր փաստաթղթերը (ստացված վարկերի և փոխառությունների պայմանագրեր, համաձայնագրեր և այլն):

2.2 Թիվ 001188 գրության 5-րդ կետով պահանջված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ «Մաքս Օիլ» ընկերության՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության լրամշակված տարբերակը՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով), մասնավորապես նշելով՝

2.2.1 «Մաքս Օիլ» ընկերության փոխադրման և էքսպեդիտորական ծախսերի բացվածքը՝ ըստ տեսակների (օրինակ՝ երկաթուղային փոխադրման վճար, ավտոմոբիլային փոխադրում, էքսպեդիտորական ծախսեր և այլն)՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

2.2.2 «Մաքս Օիլ» ընկերության վարչական, ֆինանսական և իրացման ծախսերի բացվածքը՝ ըստ առավել խոշոր հինգ հոդվածների՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 20-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 001188 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը մինչև 2024 թվականի մարտի հինգը երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 21-ի թիվ 001762 գրությամբ «Մաքս Օիլ» ընկերությունից Թիվ 001188 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը ներառյալ:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 28-ին ներկայացրել է Թիվ 001188 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի ապրիլի 19-ին ներկայացրել է Թիվ 002966 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

3. Հանձնաժողովը Թիվ 008361 գրությամբ «Մաքս Օիլ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Մաքս Օիլ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Մաքս Օիլ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 29-ին ներկայացրել է դիրքորոշում:

4. Հանձնաժողովը Թիվ 13859 գրությամբ «Մաքս Օիլ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամոյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Մաքս Օիլ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի նոյեմբերի 28-ի գրությամբ խնդրել է 15 օրյա երկարաձգել «Մաքս Օիլ» ընկերության կողմից գրավոր դիրքորոշում ներկայացնելու ժամկետը:

Հանձնաժողովը 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 014158 գրությամբ «Մաքս Օիլ» ընկերությանը դիրքորոշում ներկայացնելու համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 5-ը ներառյալ:

«Մաքս Օիլ» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացրել է դիրքորոշում:

***<u>3.5 «Կամոյլ» ընկերություն.</u>***

Հանձնաժողովը Վարույթների շրջանակում 2024 թվականի մարտի 1-ի թիվ 002193 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 002193 գրություն**) դիմել է «Կամոյլ» ընկերությանը՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1. «Կամոյլ» ընկերության կողմից Դիտարկվող ժամանակահատվածում բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կնքված բոլոր պայմանագրերի, համաձայնագրերի և կից փաստաթղթերի պատճենները:

2. Որևէ ապրանքային նշանի ներքո տրանսպորտային միջոցների՝ բենզինի և դիզելային վառելիքի լցավորում իրականացնելու դեպքում՝ «Կամօյլ» ընկերության կողմից կնքված համապատասխան բոլոր փաստաթղթերի՝ ապրանքային նշանի օգտագործման լիցենզիա, պայմանագիր, համաձայնագիր և այլն, պատճենները:

3. Դիտարկվող ժամանակահատվածում «Կամօյլ» ընկերության կողմից բենզինի (ըստ տեսակների Աի-92, Աի-95 և Աի-98) և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

4. Դիտարկվող ժամանակահատվածում «Կամօյլ» ընկերության կողմից կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

5. Դիտարկվող ժամանակահատվածում «Կամօյլ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով շահագործվող բենզալցակայանների վերաբերյալ, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն կից ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

6. «Կամօյլ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի իրացման գների հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանությունը և այն գործոնները, որոնք «Կամօյլ» ընկերության կողմից հաշվի են առնվում իրացման գների սահմանման ժամանակ:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի մարտի 12-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 002193 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը մինչև 2024 թվականի մարտի 29-ը երկարաձգելու միջնորդությամբ:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի մարտի 15-ին Հանձնաժողով է ներկայացրել Թիվ 002193 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի ապրիլի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել Թիվ 002193 գրությամբ պահանջված ճշգրտված տեղեկատվությունը:

3. Հանձնաժողովը Թիվ 008362 գրությամբ «Կամօյլ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Կամօյլ» ընկերության ծախսերի և իրացումների վերաբերյալ» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Կամօյլ» ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի հուլիսի 29-ին ներկայացրել է դիրքորոշում:

4. Հանձնաժողովը Թիվ 13861 գրությամբ «Կամօյլ» ընկերությանն է ուղարկել Համապատասխան ստորաբաժանման կողմից կազմված ««Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ թիվ ՀԳ-02533/24 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքը, ինչի առնչությամբ «Կամօյլ»

ընկերությունից պահանջվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր դիրքորոշում:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի նոյեմբերի 28-ի գրությամբ խնդրել է 15 օրյա ժամկետով երկարաձգել «Կամօյլ» ընկերության կողմից գրավոր դիրքորոշում ներկայացնելու ժամկետը:

Հանձնաժողովը 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 014157 գրությամբ «Կամօյլ» ընկերությանը դիրքորոշում ներկայացնելու համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 5-ը ներառյալ:

«Կամօյլ» ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացրել է դիրքորոշում:

***<u>3.6 Այլ տնտեսավարող սուբյեկտներ և պետական մարմիններ.</u>***

***<u>3.6.1 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.</u>***

Հանձնաժողովը Թիվ ՀԳ-04798/23 վարույթի շրջանակում.

1. 2024 թվականի փետրվարի 26-ի թիվ 001932 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 001932 գրություն**) դիմել է «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերություն**) հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1.1 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության կողմից Հաշվետու ժամանակահատվածի համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կնքված բոլոր պայմանագրերի, համաձայնագրերի և կից փաստաթղթերի պատճենները:

1.2 Դիտարկվող ժամանակահատվածում «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերումների և իրացումների վերաբերյալ՝ ըստ տեսակների՝ ամսական կտրվածքով՝ համաձայն Ձևանմուշ 1-ի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

1.3 Դիտարկվող ժամանակահատվածում «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության կողմից «Սի Փի Էս Էներջի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը իրացված բենզինին և դիզելային վառելիքին առնչվող ծախսերի և իրացման շրջանառության վերաբերյալ՝ ամսական կտրվածքով՝ համաձայն կից ներկայացված Ձևանմուշ 2-ի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

1.4 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության կողմից 2023 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին բենզինի ձեռքբերման բոլոր փաստաթղթերի պատճենները (հաշիվ ապրանքագրեր, կից փաստաթղթեր և այլն):

2. 2024 թվականի ապրիլի 22-ի թիվ 004458 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 004458 գրություն**) դիմել է «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությանը երեք

աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

2.1 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության 2022 և 2023 թվականների՝ ակտիվների և պասիվների հաշվապահական հաշվեկշիռները՝ համաձայն Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 749-Ն հրամանի Հավելված 1-ի Բաժին 8-ի:

2.2 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության 2022-2023 թվականների փոխադրման և էքսպեդիտորական ծախսերը հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները՝ պայմանագրեր, համաձայնագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն:

2.3 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության 2022-2023 թվականների ֆինանսական ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները՝ պայմանագրեր, համաձայնագրեր և այլն:

2.4 Թիվ 001932 գրության 3-րդ կետով պահանջված ծախսերի և իրացման շրջանառության վերաբերյալ «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության լրամշակված տարբերակը՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով), մասնավորապես նշելով՝

2.4.1 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության տրանսպորտային ծախսերի բացվածքը՝ ըստ տեսակների (օրինակ՝ երկաթուղային փոխադրման վճար, ավտոմոբիլային փոխադրում, էքսպեդիտորական ծախսեր և այլն)՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

2.4.2 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերության վարչական, պահպանման, իրացման և ֆինանսական ծախսերի բացվածքները՝ յուրաքանչյուրն ըստ առավել խոշոր հինգ հոդվածների՝ ամսական կտրվածքով 2022-2023 թվականների համար:

«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությունը 2024 թվականի մարտի 11-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 001932 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը մինչև 2024 թվականի մարտի 20-ը երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 12-ի թիվ 002634 գրությամբ «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությունից Թիվ 001932 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի մարտի 20-ը ներառյալ:

«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությունը 2024 թվականի մարտի 20-ին ներկայացրել է Թիվ 001932 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությունը 2024 թվականի մայիսի 2-ին դիմել է Հանձնաժողով՝ Թիվ 004458 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը 5 աշխատանքային օրով երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 004842 գրությամբ «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությունից Թիվ 004458 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի մայիսի 10-ը ներառյալ:

«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ընկերությունը 2024 թվականի մայիսի 10-ին ներկայացրել է Թիվ 004458 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

***3.6.2 «Ռոյալ Օյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.***

Հանձնաժողովը Վարույթների շրջանակում 2024 թվականի փետրվարի 7-ի թիվ 001193 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 001193 գրություն**) դիմել է «Ռոյալ Օյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Ռոյալ Օյլ» ընկերություն**) 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

7. «Ռոյալ Օյլ» ընկերության 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բենզինի ձեռքբերման նպատակով ԵԱՏՄ-ի և երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

8. 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ռոյալ Օյլ» ընկերության համար ԵԱՏՄ-ից և երրորդ երկրներից բենզինի ձեռքբերման նպատակով միջնորդ հանդիսացող (փոխադրման, էքսպեդիտորական և այլ ծառայություններ մատուցող) ընկերությունների հետ կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլ) պատճենները:

9. «Ռոյալ Օյլ» ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բենզինի (ԵԱՏՄ-ից և Երրորդ երկրներից) ներմուծման բոլոր փաստաթղթերի պատճենները (բեռնամաքսային հայտարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլն):

«Ռոյալ Օյլ» ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բենզինի (ըստ տեսակների Աի-92, Աի-95 և Աի-98) և դիզելային վառելիքի շրջանառության ծավալների վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված թիվ 1 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձևանմուշում առկա որոշակի տեղեկատվություն «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը Դիտարկվող ժամանակահատվածի համար արդեն իսկ ներկայացրել է Հանձնաժողով, ուստի, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը խնդրել է ճշգրտել ուղարկված տեղեկատվությունը կամ գրությամբ հաստատել, որ այն վերջնական է և կարող է դիտարկվել **Վարույթների** ուսումնասիրության շրջանակներում:

10. «Ռոյալ Օյլ» ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կատարված ծախսերի և ստացված հասույթների վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված թիվ 2 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով:

11. «Ռոյալ Օյլ» ընկերության կողմից, ինչպես նաև «Ռոյալ Օյլ» ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք իրականացնելու նպատակով

շահագործվող բենզալցակայանների վերաբերյալ, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի՝ համաձայն կից ներկայացված թիվ 3 ձևանմուշի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) և թղթային տարբերակներով: Ընկերության ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող բենզալցակայանների առկայության դեպքում՝ կցել համապատասխան պայմանագրերի և կից համաձայնագրերի պատճենները:

12. «Ռոյալ Օյլ» ընկերության կողմից բենզինի և դիզելային վառելիքի իրացման գների հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանությունը և այն գործոնները, որոնք Ընկերության կողմից հաշվի են առնվում իրացման գների սահմանման ժամանակ:

13. «Ռոյալ Օյլ» ընկերության կողմից ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործընթացի և իրացման շղթայի փուլերի մանրամասն նկարագրությունը՝ ներմուծումից մինչև մանրածախ իրացում:

«Ռոյալ Օյլ» ընկերությունը 2024 թվականի փետրվարի 19-ին ներկայացրել է Ծիվ 001193 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

***<u>3.6.3 «Հարավկովկասյան Երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն.</u>***

Հանձնաժողովը Վարույթների շրջանակում 2024 թվականի մարտի 19-ի թիվ 002944 գրությամբ (այսուհետ նաև՝ **Ծիվ 002944 գրություն**) դիմել է «Հարավկովկասյան Երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերություն**)՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն.

1. 2022-2023 թվականներին «Մաքս Օիլ», «Մեգա Ծրեյդ», «Ֆլեշ», «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ռոյալ Օյլ», «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» (ՀՎՀՀ՝ 02662703, 00489503, 01808789, 02847546, 02279851, 02614085) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ՝ ըստ տեսակների՝ տարեկան կտրվածքով՝ համաձայն Ձևանմուշ 1-ի (MS Excel ձևաչափով):

2. 2022-2023 թվականների ընթացքում «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերության կողմից վերոգրյալ կետում նշված ընկերություններին մատուցված ծառայությունների համար կիրառված սակագների և զեղչային քաղաքականության վերաբերյալ:

«Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունը 2024 թվականի մարտի 26-ին դիմել է Հանձնաժողով՝ Ծիվ 002944 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման ժամկետը 5 աշխատանքային օրով երկարաձգելու միջնորդությամբ:

Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 29-ի թիվ 003406 գրությամբ «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունից Ծիվ 002944 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացման համար տրամադրել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2024 թվականի ապրիլի 8-ը ներառյալ:

«Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությունը 2024 թվականի ապրիլի 3-ին ներկայացրել է Ծիվ 002944 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

***3.6.4 «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն***

Հանձնաժողովը Վարույթների շրջանակում 2024 թվականի ապրիլի 29-ի թիվ 004677 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 004677 գրություն**) դիմել է «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ընկերություն**)՝ 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնելու հետևյալ տեղեկատվությունը.

1. «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ընկերություն**) կողմից «Մաքս Օիլ», «Մեգա Թրեյդ», «Ֆլեշ», «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ռոյալ Օյլ», «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» և «Կամօյլ» (ՀՎՀՀ համապատասխանաբար՝ 02662703, 00489503, 01808789, 02847546, 02279851, 02614085, 03523673) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին 2022-2023 թվականներին մատուցված ծառայության արժեքի վերաբերյալ՝ ամսական կտրվածքով՝ համաձայն Ձևանմուշ 1-ի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) եղանակով:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության կողմից Ձևանմուշ 2-ում նշված բենզալցակայանների հասցեներում մատուցված ծառայության արժեքի՝ տարեկան կտրվածքով և ծառայություն ձեռքբերող բաժանորդների վերաբերյալ՝ համաձայն Ձևանմուշ 2-ի՝ էլեկտրոնային (MS Excel ձևաչափով) եղանակով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը 2024 թվականի հունիսի 25-ին ներկայացրել է Թիվ 004677 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

***3.6.5 Պետական եկամուտների կոմիտե.***

Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 12-ի թիվ ԳԳ/125-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ/125-2024 գրություն**) դիմել է Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ ՊԵԿ)՝ ստանալու հետևյալ տեղեկատվությունը.

1. 2022 և 2023 թվականների ընթացքում տնտեսական գործունեության դասակարգչի ներքոնշյալ կոդերով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների ցանկը (նշելով վերջիններիս անվանումը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական հասցեն, գործունեության հասցեն (բենզալցման կայանների հասցեները), հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, գործունեության տեսակը, իրացման ծավալը).

- 46.71.2 (բենզինի մեծածախ առևտուր),
- 46.71.4 (դիզելային վառելիքի մեծածախ առևտուր),
- 46.71.9 (այլ վառելիքի և հարակից արտադրանքի մեծածախ առևտուր),
- 47.30.1 (ավտոմեքենաների համար բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ առևտուր բենզալցման կայաններում):

2. «Մաքս Օիլ», «Մեգա Թրեյդ», «Ֆլեշ», «Սի Փի Էս Էներջի Գրուպ» և «Ռան Օյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՀՎՀՀ՝ 02662703, 00489503, 01808789, 02847546, 02279851) կողմից 2022 և 2023 հաշվետու տարիների

համար ՊԵԿ ներկայացված բոլոր հաշվետվությունների պատճենները (վճարված բոլոր հարկերի վերաբերյալ՝ ավելացված արժեքի հարկի հաշվետվություն, շահութահարկի հաշվետվություն, ակցիզային հարկի հաշվետվություն և այլն, ինչպես նաև առկայության դեպքում՝ այլ ֆինանսական հաշվետվություններ):

Պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի փետրվարի 27-ին ներկայացրել է Թիվ ԳԳ/125-2024 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 15-ի թիվ ԳԳ/261-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ/261-2024 գրություն**) դիմել է ՊԵԿ՝ ստանալու հետևյալ տեղեկատվությունը.

1. «Մաքս Օիլ», «Մեգա Թրեյդ», «Ֆլեշ», «Սի Փի Էս Էներջի Գրուպ» և «Ռոյալ Օյլ» (ՀՎՀՀ՝ 02662703, 00489503, 01808789, 02847546, 02279851) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների աշխատակիցների ցանկը, ովքեր 2022-2023 թվականներին աշխատել են վերոնշյալ ընկերություններում՝ նշելով վերջիններիս զբաղեցրած պաշտոնը, վճարված աշխատավարձի չափը՝ տարեկան կտրվածքով, և առկայության դեպքում՝ այլ ընկերություններում՝ նրանց աշխատանքային ներգրավվածությունը:

2. «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» և «Կամօյլ» (ՀՎՀՀ՝ 02614085, 03523673) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից 2022 և 2023 հաշվետու տարիների համար ՊԵԿ ներկայացված բոլոր հաշվետվությունների պատճենները (վճարված բոլոր հարկերի վերաբերյալ՝ ավելացված արժեքի հարկի հաշվետվություն, շահութահարկի հաշվետվություն, ակցիզային հարկի հաշվետվություն և այլն, ինչպես նաև առկայության դեպքում՝ այլ ֆինանսական հաշվետվություններ):

Պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի մարտի 26-ին ներկայացրել է Թիվ ԳԳ/261-2024 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 23-ի թիվ ԳԳ/410-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ/410-2024 գրություն**) դիմել է ՊԵԿ՝ ստանալու հետևյալ տեղեկատվությունը.

1. «Մաքս Օիլ», «Մեգա Թրեյդ», «Ֆլեշ», «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ռոյալ Օյլ», «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» և «Կամօյլ» (ՀՎՀՀ՝ 02662703, 00489503, 01808789, 02847546, 02279851, 02614085, 03523673) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից 2023 հաշվետու տարվա բոլոր հաշվետվությունների պատճենները (վճարված բոլոր հարկերի վերաբերյալ՝ ավելացված արժեքի հարկի հաշվետվություն, շահութահարկի հաշվետվություն, ակցիզային հարկի հաշվետվություն և այլն, ինչպես նաև առկայության դեպքում՝ այլ ֆինանսական հաշվետվություններ):

2. «Կամօյլ» և «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների աշխատակիցների ցանկը, ովքեր 2022-2023 թվականներին աշխատել են վերոգրյալ ընկերություններում՝ նշելով վերջիններիս զբաղեցրած պաշտոնը, վճարված աշխատավարձի չափը՝ տարեկան կտրվածքով և

առկայության դեպքում՝ այլ ընկերություններում՝ նրանց աշխատանքային ներգրավվածությունը:

Պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի մայիսի 6-ին ներկայացրել է Թիվ ԳԳ/410-2024 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը Թիվ ՀԳ-02533/24 վարույթի շրջանակում գործի փաստական հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով 2024 թվականի հունիսի 13-ի թիվ ԳԳ/626-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ/626-2024 գրություն**) դիմել է ՊԵԿ՝ հնարավոր սեղմ ժամկետում Հանձնաժողովին տրամադրելու տեղեկատվություն՝ «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՀՎՀՀ՝ 02847546, 01808789, 00489503 և 03523673) կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով իրացված Աի-92 տեսակի բենզինի իրացման գների և քանակների վերաբերյալ՝ ըստ քաղաք Երևանում գրանցված ՀԴՄ հասցեների՝ հետևյալ ամիսների համար.

1. 2022 թվականի փետրվար, մարտ, նոյեմբեր, դեկտեմբեր,
2. 2023 թվականի փետրվար, մարտ, սեպտեմբեր, հոկտեմբեր:

Պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի հունիսի 20-ին ներկայացրել է Թիվ ԳԳ/626-2024 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 24-ի թիվ ԳԳ/658-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ/658-2024 գրություն**) դիմել է ՊԵԿ՝ ստանալու տեղեկատվություն «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՀՎՀՀ՝ 02847546, 01808789, 00489503, 02662703 և 03523673) կողմից 2024 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունիսի 10-ը ներառյալ Աի-92 տեսակի բենզինի իրացման նպատակով դուրս գրված հաշիվ ապրանքագրերի վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի հուլիսի 7-ին ներկայացրել է Թիվ ԳԳ/658-2024 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

***<u>4. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. 2022 և 2023 թվականների ընթացքում ՀՀ-ում իրացվող բենզինի հիմնական մասը՝ ավելի քան 95 տոկոսը, ներմուծվել է «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից:

***<u>Աղյուսակ 1</u>***[1]

[1] «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Մաքս Օիլ» ընկերությունների տվյալները վերցված են Ընկերությունների՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունից, իսկ մնացած տնտեսավարող սուբյեկտներինը՝ ՊԵԿ համակարգից:

**2022-2023 թվականներին ՀՀ ներմուծված բենզինի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինների վերաբերյալ**[2]

| Հ/հ | Տնտեսավարող սուբյեկտ | Ներմուծում /հազար լիտր/ | | Մասնաբաժին | |
|---|---|---|---|---|---|
| | | 2022 | 2023 | 2022 | 2023 |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| 5 | | | | | |
| 6 | | | | | |
| Այլ | | | | | |
| Ընդամենը | | | | 100% | 100% |

2. Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծված բենզինի 70-80 տոկոսը կազմել է ԱԻ-92 տեսակի բենզինը: ԱԻ-92 տեսակի բենզինի գերակշիռ մասը ներմուծվել է Ընկերությունների կողմից:

*Աղյուսակ 2*

**2022-2023 թվականներին ՀՀ ներմուծված ԱԻ-92 տեսակի բենզինի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինների վերաբերյալ**

| Հ/հ | Տնտեսավարող սուբյեկտ | Ներմուծում /հազար լիտր/ | | Մասնաբաժին | |
|---|---|---|---|---|---|
| | | 2022 | 2023 | 2022 | 2023 |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| 5 | | | | | |
| 6 | | | | | |
| Այլ | | | | | |
| Ընդամենը | | | | 100% | 100% |

3. «Սի Փի Էս էներջի Գրուպ», «Ֆլեշ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունները իրականացնում են բենզինի ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացում, իսկ «Մաքս Օիլ» ընկերությունը՝ միայն մեծածախ իրացում:

4. «Մաքս Օիլ» ընկերությունը և «Կամօյլ» ընկերությունը կազմում են անձանց խումբ (այսուհետ նաև՝ **Անձանց խումբ**):

---

2

5. Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերությունը բենզինի մանրածախ իրացում իրականացրել է իր հետ փոխկապակցված «Կամօյլ» ընկերության միջոցով:

6. Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մաքս Օիլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների կողմից մեծածախ եղանակով իրացված Աի-92 տեսակի բենզինի միջին կշռված ամսական գները ներկայացված են Գծապատկեր 1-ում:

7. Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների կողմից մանրածախ եղանակով իրացված Աի-92 տեսակի բենզինի միջին կշռված ամսական գները ներկայացված են Գծապատկեր 2-ում:

***Գծապատկեր 1***

Ա-92 տեսակի բենզինի մեծածախ իրացման միջին կշռված գինը 2022-2023 թվականներին՝ ամսական կտրվածքով՝ ըստ տնտեսավարող սուբյեկտների



***Գծապատկեր 2***[3]




[3] Գծապատկեր 2-ում դիտարկված է «Կամօյլ» ընկերության մանրածախ իրացման միջին կշռված գինը, քանի որ «Մաքս Օիլ» ընկերությունը մանրածախ իրացումը իրականացնում է իր հետ փոխկապակցված «Կամօյլ» ընկերության միջոցով:

8. Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերությունների ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գները փոխվել են միմյանց համահունչ:

9. Դիտարկվող ժամանակահատվածում «Ֆլեշ» ընկերության կողմից Աի-92 տեսակի բենզինի ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գների փոփոխությունը համապատասխան չի եղել «Ֆլեշ» ընկերության կողմից կատարված ծախսերի փոփոխություններին: «Ֆլեշ» ընկերության ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածի որոշ ամիսներին ավելի ցածր են եղել, քան իրացման ինքնարժեքը, իսկ որոշ ամիսներին՝ «Ֆլեշ» ընկերությունը 1 լիտր Աի-92 տեսակի բենզինի համար մեծածախ իրացման դեպքում ունեցել է մինչև դրամ շահույթ (մինչև հարկում), իսկ մանրածախ իրացման դեպքում՝ մինչև դրամ շահույթ (մինչև հարկում):

10. Դիտարկվող ժամանակահատվածում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գների փոփոխությունը համապատասխան չի եղել «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության կողմից կատարված ծախսերի փոփոխություններին: «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածի որոշ ամիսներին ավելի ցածր են եղել, քան իրացման ինքնարժեքը, իսկ որոշ ամիսներին՝ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունը 1 լիտր Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման դեպքում ունեցել է մինչև դրամ շահույթ (մինչև հարկում):

11. Դիտարկվող ժամանակահատվածում «Մեգա Թրեյդ» ընկերության կողմից ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գների փոփոխությունը համապատասխան չի եղել «Մեգա Թրեյդ»» ընկերության կողմից կատարված ծախսերի փոփոխություններին: «Մեգա Թրեյդ» ընկերության ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածի որոշ ամիսներին ավելի ցածր են եղել, քան իրացման ինքնարժեքը, իսկ որոշ ամիսներին՝ «Մեգա Թրեյդ» ընկերությունը 1 լիտր Աի-92 տեսակի բենզինի համար մեծածախ իրացման դեպքում ունեցել է մինչև դրամ շահույթ (մինչև հարկում), իսկ մանրածախ իրացման դեպքում՝ մինչև դրամ շահույթ (մինչև հարկում):

12. Դիտարկվող ժամանակահատվածում «Մաքս Օիլ» ընկերության մեծածախ իրացման գների փոփոխությունները համապատասխան չեն եղել «Մաքս Օիլ» ընկերության կողմից կատարված ծախսերի փոփոխություններին: «Մաքս Օիլ» ընկերության մեծածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածի որոշ ամիսներին ավելի ցածր են եղել, քան իրացման ինքնարժեքը, իսկ որոշ ամիսներին՝ «Մաքս Օիլ» ընկերությունը 1 լիտր Աի-92 տեսակի բենզինի համար ունեցել է մինչև դրամ շահույթ (մինչև հարկում):

13. «Կամօյլ» ընկերության ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածի որոշ ամիսներին ավելի ցածր են եղել, քան իրացման ինքնարժեքը, իսկ որոշ ամիսներին՝ «Կամօյլ» ընկերությունը 1 լիտր Աի-92

տեսակի բենզինի համար մեծածախ իրացման դեպքում ունեցել է մինչև դրամ շահույթ (մինչև հարկում):

14. Միավոր լիտր Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացմանն ուղղված միջին ընդհանուր ծախսերը «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Մաքս Օիլ» ընկերությունների մոտ 2022 թվականին համապատասխանաբար կազմել դրամ, իսկ 2023 թվականին՝ դրամ:

15. 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Ընկերությունների միջին ինքնարժեքը և Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գները ներկայացված են ստորև.

| Տարի | Ամիս | Ինքնարժեք | | | | Մանրածախ իրացման միջին գին /առանց ԱԱՀ/ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Ֆլեշ» ՍՊԸ | «Մեգա Թրեյդ» ՍՊԸ | «Կամօյլ» ՍՊԸ | «Սի Փի Էս Էներջի Գրուպ» | «Ֆլեշ» ՍՊԸ | «Մեգա Թրեյդ» ՍՊԸ | «Կամօյլ» ՍՊԸ | «Սի Փի Էս Էներջի Գրուպ» |
| 2022 | հոկտեմբեր | | | | | 411 | 403 | 411 | 411 |
| | նոյեմբեր | | | | | 396 | 388 | 395 | 397 |
| | դեկտեմբեր | | | | | 339 | 335 | 334 | 333 |
| 2023 | օգոստոս | | | | | 397 | 391 | 396 | 395 |
| | սեպտեմբեր | | | | | 421 | 415 | 421 | 422 |
| | հոկտեմբեր | | | | | 444 | 437 | 444 | 445 |

16. Ընկերությունների կողմից 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին միավոր լիտր Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման գները ներկայացված են ստորև.

| «Կամօյլ» ՍՊԸ | | «Մեգա Թրեյդ» ՍՊԸ | | «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ՍՊԸ | | «Ֆլեշ» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին | Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին | Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին | Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին |
| 25.11.2022 | 450 | 25.11.2022 | 450 | 27.11.2022 | 450 | 26.11.2022 | 450 |
| 02.12.2022 | 430 | 02.12.2022 | 430 | 03.12.2022 | 430 | 02.12.2022 | 430 |
| 23.12.2022 | 390 | 23.12.2022 | 390 | 24.12.2022 | 390 | 24.12.2022 | 390 |
| 01.09.2023 | 490 | 01.09.2023 | 490 | 01.09.2023 | 490 | 01.09.2023 | 490 |
| 07.09.2023 | 510 | 08.09.2023 | 510 | 08.09.2023 | 510 | 08.09.2023 | 510 |
| 06.10.2023 | 540 | 06.10.2023 | 540 | 06.10.2023 | 540 | 08.10.2023 | 540 |

17. 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ընկերությունների միջին ինքնարժեքները և Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գների փոփոխությունները ներկայացված են ստորև.

| Հ/հ | Տնտեսավարող սուբյեկտ | 2022 թվական | | | | 2023 թվական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հոկտեմբեր-նոյեմբեր | | նոյեմբեր-դեկտեմբեր | | օգոստոս-սեպտեմբեր | | սեպտեմբեր- հոկտեմբեր | |
| | | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն |
| 1 | Ֆլեշ ՍՊԸ | -8 | -15 | -47 | -56 | 29 | 24 | -42 | 24 |
| 2 | Մեգա Թրեյդ | -7 | -15 | -13 | -53 | 36 | 24 | 32 | 22 |
| 3 | Սի Փի Էս Էներջի Գրուպ | -36 | -15 | -45 | -64 | -12 | 26 | -17 | 24 |
| 4 | Կամօյլ | -11 | -16 | -47 | -61 | 26 | 25 | 27 | 22 |

18. «Ֆլեշ» ընկերության հասույթը Աի-92 տեսակի բենզինի իրացումից 2022 թվականին կազմել է ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ ՀՀ դրամ:

19. «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության հասույթը Աի-92 տեսակի բենզինի իրացումից 2022 թվականին կազմել է ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ ՀՀ դրամ:

20. «Մեգա Թրեյդ» ընկերության հասույթը Աի-92 տեսակի բենզինի իրացումից 2022 թվականին կազմել է ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ ՀՀ դրամ:

21. «Մաքս Օիլ» ընկերության հասույթը (չի ներառվում «Կամօյլ» ընկերության հետ փոխադարձ գործարքները) Աի-92 տեսակի բենզինի իրացումից 2022 թվականին կազմել է ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ ՀՀ դրամ:

22. «Կամօյլ» ընկերության հասույթը Աի-92 տեսակի բենզինի իրացումից 2022 թվականին կազմել է ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ ՀՀ դրամ:

***5. Վարչական վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Վարույթը հարուցվել է հակամրցակցային համաձայնության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով: Մասնավորապես, 2022 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունների՝ տարբեր ծախսային կառուցվածքի պայմաններում գնային քաղաքականության, ներառյալ՝ գնի բարձրացման, իջեցման, պահպանման, բարձր և ցածր գնի կիրառման առնչությամբ վարքագծում հակամրցակցային համաձայնության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերություններն առարկել են նշելով հետևյալը.

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը նախ և առաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

***1. Ինչպե՞ս է դրսևորվում հակամրցակցային համաձայնություն իրավախախտման օբյեկտիվ կողմը:***

***2. Ինչպիսի՞ ապացույցներով կարող է հիմնավորվել գնի բարձրացման, իջեցման, սահմանման դրսևորմամբ հակամրցակցային համաձայնություն իրավախախտումը:***

***3. Ո՞վ է կրում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը:***

*4. Արդյոք Հանձնաժողովը որոշում կայացնելիս պարտավոր է անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի բոլոր փաստարկներին:*

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>***

Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/2654/05/14 վարչական գործով 2023 թվականի փետրվարի 17-ին կայացված որոշմամբ արձանագրել է. «Տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու համար այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար, նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական մրցակցային քաղաքականությունը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության անքակտելի մասը: Բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու համար կարևոր նշանակություն ունի տնտեսական մրցակցության պաշտպանությունը, որն, ի թիվս այլնի, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների զսպման համատեքստում ուղղված է սպառողների իրավունքների պաշտպանությանը»:

Վերոնշյալ սկզբունքների հավասարակշռմանն ու ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանն են ուղղված

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) իրավակարգավորումները, որոնցով արգելվում են տնտեսվարող սուբյեկտների՝ տնտեսությանը վնաս հասցնող, մրցակցությունը սահմանափակող կանխող, արգելող անբարեխիղճ մրցակցության գործողությունները կամ վարքագիծը:

Այդպիսի գործողությունների կամ վարքագծի շարքին են դասվում հակամրցակցային համաձայնությունները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց բանավոր կամ գրավոր այն համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսավարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքերի:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնությունները կնքվում (կայացվում) են՝

1) միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, եթե համաձայնությունն առնչվում է տվյալ ապրանքային շուկային (հորիզոնական համաձայնություն).

2) միևնույն ապրանքային շուկայում ձեռք բերող և իրացնող, մրցակից չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, եթե համաձայնությունն առնչվում է տվյալ ապրանքային շուկային (ուղղահայաց համաձայնություն).

3) որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների միջև, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, ինչպես նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված այլ համաձայնություններ (այլ համաձայնություն):

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել՝

1) ապրանքային շուկան կամ մատակարարման աղբյուրները բաշխելուն կամ բաժանելուն՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի կամ ապրանքի տեսականու կամ իրացնողների կամ ձեռք բերողների խմբերի կամ տարածքային սկզբունքի կամ այլ եղանակի.

2) այլ տնտեսավարող սուբյեկտների՝ ապրանքային շուկա մուտք գործելուն կամ ապրանքային շուկայից ելքը խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը կամ շուկայից ելքը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն.

3) ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

4) իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, հավելաճի, արտոնությունների կամ առևտրի այլ պայմանների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանը.

5) արտադրանքի, մատակարարման, տեխնիկական զարգացման կամ արդիականացման, ներմուծման, առևտրի կամ ներդրումների սահմանափակմանը կամ վերահսկմանը.

6) ի վնաս սպառողի շահերի՝ ապրանքների ներկրմանը կամ արտադրության չհիմնավորված կրճատմանը կամ դադարեցմանը կամ ապրանքները պահելու, փչացնելու կամ ոչնչացնելու միջոցով կամ այլ ձևով ապրանքային շուկայում պակասուրդի ստեղծմանը կամ պահպանմանը.

7) պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների պայմանների կամ արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը (խեղաթյուրմանը) կամ ապրանքի գնի չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

8) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ առևտրային գործունեությունը չկազմակերպելու պայմանավոր վաճությանը.

9) միևնույն ապրանքի համար խտրական պայմաններ առաջարկելուն կամ կիրառելուն.

10) պայմանագրի կողմին, ներառյալ՝ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորություններ պարտադրելուն, որոնք տնտեսապես կամ տեխնոլոգիապես հիմնավորված և շահավետ չեն նրա համար կամ իրենց բնույթով, կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

11) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չմտնելու, կամ պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու կամ կասեցնելու պարտադրմանը.

12) հակամրցակցային համաձայնության մասնակցին (մասնակիցներին) պատկանող փոխանցման ցանցերը, այլ բաշխիչ ցանցերը կամ այլ ենթակառուցվածքները ողջամիտ վճարի կամ պայմանի դիմաց այլ տնտեսավարող սուբյեկտներին (սուբյեկտին) օգտագործելու կամ շահագործելու թույլտվություն կամ հասանելիություն չտալուն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտներն օբյեկտիվորեն չեն կարող այլ տնտեսավարող սուբյեկտներից ստանալ այդ փոխանցման ցանցերի, այլ բաշխիչ ցանցերի կամ այլ ենթակառուցվածքների շահագործման կամ օգտագործման թույլտվությունը կամ հասանելիությունը, և առանց դրա հնարավոր չէ գործունեություն իրականացնել ապրանքային շուկայում.

13) այլ պայմանների կամ վարքագծի, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ուղղահայաց հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել՝

1) ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտի համար տվյալ ապրանքի վերավաճառքի գին սահմանելուն, բացառությամբ ապրանքի վերավաճառքի առավելագույն գնի սահմանման.

2) իրացնող տնտեսավարող սուբյեկտի մրցակից կամ հնարավոր մրցակից համարվող տնտեսավարող սուբյեկտից ապրանք ձեռք բերելուց հրաժարվելուն կամ այդ տնտեսավարող սուբյեկտից ձեռք բերվող ապրանքների քանակի, տեսականու, գնի կամ այլ պայմաններին, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը գործում է իրացնող տնտեսավարող սուբյեկտի ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո.

3) հակամրցակցային համաձայնության մասնակցին (մասնակիցներին) պատկանող փոխանցման ցանցերը, այլ բաշխիչ ցանցերը կամ այլ ենթակառուցվածքները ողջամիտ վճարի կամ պայմանի դիմաց այլ տնտեսավարող սուբյեկտին (սուբյեկտներին) օգտագործելու կամ շահագործելու թույլտվություն չտալուն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտն օբյեկտիվորեն չի կարող այլ տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել այդ փոխանցման ցանցերի, այլ բաշխիչ ցանցերի կամ այլ ենթակառուցվածքների շահագործման կամ օգտագործման թույլտվությունը, և առանց դրա հնարավոր չէ գործունեություն իրականացնել ապրանքային շուկայում.

4) այլ պայմանների կամ վարքագծի, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է հակամրցակցային համաձայնության ընդհանուր սահմանումը: Միևնույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը հակամրցակցային համաձայնություն իրավախախտման օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտացոլված են Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 6-րդ մասերում:

Հակամրցակցային համաձայնությունների առանձին դրսևորումների վերլուծությունից բխում է, որ, ի թիվս այլնի, հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

Այսպես, հակամրցակցային համաձայնությունները կարող են կնքված համարվել թե՛ այն դեպքում, երբ տվյալ համաձայնությունը ձեռք է բերվել միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, թե՛ երբ այն ձեռք է բերվել միևնույն ապրանքային շուկայում ձեռք բերող և իրացնող, մրցակից չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև և թե՛ երբ համաձայնություն ձեռք բերողները որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտներ են:

Հակամրցակցային համաձայնությունների՝ հորիզոնական, ուղղահայաց և այլ հակամրցակցային համաձայնությունների դասակարգման հիմքում ընկած է հակամրցակցային համաձայնության՝ յուրաքանչյուր դեպքում տնտեսական մրցակցության հնարավոր կամ փաստացի կանխման, սահմանափակման կամ արգելման աստիճանի չափանիշը՝ ըստ ներգրավված մասնակիցների ոլորտային ընդհանրության կամ այլ հանգամանքի:

***Երկրորդ հարցադրման կապակցությամբ.***

Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝

1) առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց.

2) այդ մասին են վկայում տնտեսավարող սուբյեկտների՝ սույն հոդվածի 3-րդ, 4-րդ կամ 6-րդ մասերում նշված գործողությունները կամ վարքագիծը:

Օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-12-րդ կետերով և 4-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում հակամրցակցային համաձայնությունն առկա է անկախ հնարավոր կամ փաստացի հետևանքից:

Ընդ որում, հակամրցակցային համաձայնության առկայությունը հաստատելու համար բավարար է փաստել տնտեսավարող սուբյեկտների համաձայնեցված գործողությունների կամ վարքագծի, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումների մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը հանգեցնելու հնարավորությունը: Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յուրաքանչյուրի դրսևորում ինքնին առնվազն առաջացնում է մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը հանգեցնելու հնարավորություն:

Հարկ է ընդգծել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, հավելաճի, արտոնությունների կամ առևտրի այլ պայմանների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանը.

Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը:

Օրենքի հիմնական հասկացություններն ու տերմինները սահմանող 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերով սահմանված են գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման, պահպանման հասկացությունները, մասնավորապես.

**տնտեսական պայմաններ** (գործոններ)՝ ապրանքի ձեռքբերման, արտադրության, իրացման (ծառայության մատուցման, աշխատանքի կատարման) հետ կապված ծախսեր, հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, գնաճ, գնանկում:

**գնի չհիմնավորված բարձրացում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված բարձրացում.

**գնի չհիմնավորված իջեցում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված իջեցում.

**գնի չհիմնավորված պահպանում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի պահպանումն այն դեպքում, երբ որոշակի տնտեսական պայմանների (գործոնների) առկայությունը կարող էր հանգեցնել կամ պետք է հանգեցներ ավելի ցածր կամ ավելի բարձր գնի սահմանման:

Վկայակոչված դրույթների համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունը, ի թիվս այլնի, վերաբերելով գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը, կամ իրացման գների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, կարող է ապացուցվել ինչպես դրա մասին վկայող որևէ փաստական տվյալի միջոցով, այնպես էլ համաձայնության մասին վկայող տնտեսավարող սուբյեկտների գործողությունների կամ վարքագծի միջոցով:

Հատկանշական է, որ անուղղակի համաձայնեցված գործողությունների կամ վարքագծի առկայությունը հիմնավորելու տեսանկյունից գործողությունների կատարումը կամ վարքագծի դրսևորումը, օրինակ՝ գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը ինքնին հակամրցակցային համաձայնության դրսևորում է:

Ընդ որում, տարբեր տնտեսավարող սուբյեկտների կողմից որևէ ապրանքի համանման գների սահմանումը ինքին չի վկայում հակամրցակցային համաձայնության առկայության մասին: Այս առումով, հարկ է շեշտել, որ հակամրցակցային համաձայնությունների դեպքում տնտեսավարող սուբյեկտների համաձայնեցված գործողությունների մասին կարող է վկայել վերջիններիս կողմից ապրանքի նույնական գների զուգահեռ բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը, այն դեպքում, երբ ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների մոտ ձևավորված տարբեր ծախսերի պայմաններում առաջարկվել են համանման գներ, ինչպես նաև միաժամանակ իրականացվել են գնային համանման փոփոխություններ, և այդ վարքագիծը չի հիմնավորվել որևէ տնտեսապես գործոններով և չի արտացոլվել ապրանքային շուկայում տնտեսական պայմանների համապատասխան փոփոխություններով: Ըստ

երևույթի, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտները գնային մրցակցության մեջ չեն գտնվել միմյանց հետ, այլ եկել են անուղղակի համաձայնության:

Ընդ որում, հակամրցակցային համաձայնությունների առկայությունը հիմնավորող ապացույցների առումով, հարկ է հաշվի առնել, որ իրավախախտման բնույթի հաշվառմամբ, առավել հաճախ այն հիմնավորվում է հենց տնտեսական բնույթի ապացույցներով, որը ներառում է հակամրցակցային համաձայնությունների հաստատմանն ուղղված վարքագծի կամ գործողության վերլուծությունը: Այսինքն՝ հակամրցակցային համաձայնությունները կարող են հաստատվել «վարքագծային» ապացույցներով, որի բովանդակությունը կազմում է տնտեսավարող սուբյեկտների գործողությունն ու վարքագիծը:

Այսպիսով՝ հակամրցակցային համաձայնությունը կարող է հիմնավորվել տնտեսավարող սուբյեկտների գործողություններով ու վարքագծով:

***Երրորդ հարցադրման կապակցությամբ.***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, բացառությամբ այն ապացույցների, որոնց վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես հակառակ կողմի միջոցով, և որոնք հակառակ կողմը չի ներկայացրել վարչական վարույթի ընթացքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ անձը վարչական վարույթի ընթացքում չի ներկայացնում իր օգտին առկա բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ, զրկվում է դրանք նույնիսկ դատական վարույթում ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները

համապատասխանաբար կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

***Չորրորդ հարցադրման կապակցությամբ.***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

2. Վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ: Ծախսերը վերադարձնելու հետ կապված ակտ ընդունելու դեպքում պետք է նշվեն վերադարձման ենթակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները:

3. Վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնց գործողությունը չի կարող գերազանցել վարչական ակտի գործողության ժամկետը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը:

4. Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

5. Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝

1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածությանը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, արձանագրել է, որ դատարանները պարտավորվում են իրենց որոշումները պատճառաբանել, սակայն դա չի կարող ընկալվել որպես յուրաքանչյուր փաստարկի մասով մանրակրկիտ պատասխան ներկայացնելու պահանջ: Պատճառաբանելու պարտականության ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից և կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո. անհրաժեշտ է հաշվի առնել, inter alia, այն բազմազան գրավոր փաստարկները, որոնք դատարաններում կարող է ներկայացնել դատավարության մասնակիցը, (...) (տես, Van de Hurk v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 19.04.1994 թվականի վճիռը, կետ 61, Hiro Balani v. Spain գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 27):

Նույնաբովանդակ դիրքորոշում արտահայտել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին (տես Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0531/05/16 վարչական գործով 2021 թվականի հոկտեմբերի 29-ի և թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 19-ի որոշումները):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտ կայացնելիս տնտեսավարող սուբյեկտի ոչ էական փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է: Ըստ այդմ, սույն որոշման շրջանակում առանձին քննարկման առարկա չդարձված Վարույթով պատասխանողների փաստարկները Հանձնաժողովի կողմից գնահատվել են այդ տրամաբանությամբ:

***Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործով, ի թիվս այլնի, առկա են հետևյալ փաստերը.

1. 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների կողմից մանրածախ եղանակով իրացված ԱԻ-92 տեսակի բենզինի միջին կշռված ամսական գները փոխվել են միմյանց համահունչ (տես՝ Գծապատկեր 2):

2. 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների կողմից ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման գները փոխվել են նույն կամ հաջորդ օրվա դրությամբ (տես՝ Աղյուսակ 12):

3. 2022 թվականի նոյեմբեր ամսին Ընկերությունների կողմից մանրածախ եղանակով իրացված ԱԻ-92 տեսակի բենզինի միջին ամսական գինը հոկտեմբեր ամսվա համեմատ նվազել է 15-16 դրամով, այն դեպքում, երբ նոյեմբեր ամսին հոկտեմբեր ամսվա համեմատ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ինքնարժեքը նվազել է 36 դրամով, «Ֆլեշ» ընկերությանը՝ 8 դրամով, «Կամօյլ» ընկերությանը՝ 11 դրամով և «Մեգա Թրեյդ» ընկերությանը՝ 7 դրամով:

4. 2022 թվականի դեկտեմբեր ամսին Ընկերությունների կողմից մանրածախ եղանակով իրացված ԱԻ-92 տեսակի բենզինի միջին ամսական գինը նոյեմբեր ամսվա համեմատ նվազել է 53-61 դրամով, այն դեպքում, երբ դեկտեմբեր ամսին նոյեմբեր ամսվա համեմատ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ինքնարժեքը նվազել է 45 դրամով, «Ֆլեշ» ընկերությանը՝ 47 դրամով, «Կամօյլ» ընկերությանը՝ 47 դրամով և «Մեգա Թրեյդ» ընկերությանը՝ 13 դրամով:

5. 2023 թվականի սեպտեմբեր ամսին Ընկերությունների կողմից մանրածախ եղանակով իրացված ԱԻ-92 տեսակի բենզինի միջին ամսական գինը օգոստոս ամսվա համեմատ բարձրացել է 24-26 դրամով, այն դեպքում, երբ սեպտեմբեր ամսին օգոստոս ամսվա համեմատ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության ինքնարժեքը նվազել է 12 դրամով, իսկ «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերություններինը ավելացել է համապատասխանաբար՝ 29, 26 և 36 դրամով:

6. 2023 թվականի հոկտեմբեր ամսին Ընկերությունների կողմից մանրածախ եղանակով իրացված ԱԻ-92 տեսակի բենզինի միջին ամսական գինը սեպտեմբեր ամսվա համեմատ բարձրացել է 22-24 դրամով, այն դեպքում, երբ հոկտեմբեր ամսին սեպտեմբեր ամսվա համեմատ «Սի Փի Էս Էներջի Գրուպ» և «Ֆլեշ» ընկերությունների

ինքնարժեքը նվազել է համապատասխանաբար 17 և 41 դրամով, իսկ «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերություններինը ավելացել է համապատասխանաբար՝ 27 և 32 դրամով:

7. 2022 թվականի նոյեմբեր ամսին «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գինը կազմել է համապատասխանաբար 397, 396, 397 և 388 դրամ, այն պարագայում, երբ նշված ամսին Ընկերությունների ինքնարժեքը համապատասխանաբար կազմել է դրամ:

8. 2022 թվականի դեկտեմբեր ամսին «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գինը կազմել է համապատասխանաբար 333, 339, 334 և 335 դրամ, այն պարագայում, երբ նշված ամսին Ընկերությունների ինքնարժեքը համապատասխանաբար կազմել է դրամ:

9. 2023 թվականի սեպտեմբեր ամսին «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գինը կազմել է համապատասխանաբար 422, 421, 421 և 415 դրամ, այն պարագայում, երբ նշված ամսին Ընկերությունների ինքնարժեքը համապատասխանաբար կազմել է դրամ:

10. 2023 թվականի հոկտեբեր ամսին «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Կամօյլ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունների ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գինը կազմել է համապատասխանաբար 445, 444, 444, 437 դրամ, այն պարագայում, երբ նշված ամսին Ընկերությունների ինքնարժեքը համապատասխանաբար կազմել է դրամ:

11. Ընկերությունները միավոր լիտր ԱԻ-92 տեսակի բենզինի համար կատարելով տարբեր ծախսեր՝ այնուամենայնիվ վարել են միանման գնային քաղաքականություն, ընդ որում, Ընկերությունների կողմից իրացման գների փոփոխությունները չեն հիմնավորվում տնտեսական պայմանների փոփոխությամբ:

12. Ընկերությունները միավոր լիտր ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման նպատակով կիրառել են միևնույն գները և գնային փոփոխությունները 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարել են նույն օրը կամ մինչև երկու օրվա տարբերությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

***1. Ո՞րն է քննարկվող ապրանքային շուկան և արդյո՞ք Ընկերությունները գործել են միևնույն ապրանքային շուկայում.***

***2. Արդյո՞ք Ընկերությունների կողմից 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրացումների համար ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ գների միաժամանակյա բարձրացումները և իջեցումները իրացմանն ուղղված ծախսերի հաշվառմամբ տնտեսապես հիմնավորված են:***

***3. Արդյո՞ք 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ընկերությունների վարքագիծը պարունակում է հակամրցակցային համաձայնության հատկանիշներ:***

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>***

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկան որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտն է, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ:

Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, ուսումնասիրության ժամանակահատվածով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջությունն է:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ փոխադարձ փոխարինելի ապրանքներ են համարվում այն ապրանքները, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով:

Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի «Ապրանքային շուկաների որոշման կարգը սահմանելու և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 190-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 263-Ն որոշմամբ սահմանված ապրանքային շուկաների որոշման կարգի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային շուկաների որոշման կարգով (այսուհետ նաև՝ **Կարգ**) կարգավորվում են Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների որոշման հետ կապված հարաբերությունները:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկաների որոշման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը.

1) ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածի որոշում,

2) ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշում,

3) ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանների որոշում,

4) ապրանքային շուկայի սուբյեկտների կազմի որոշում,

5) ապրանքային շուկայի ծավալի և տնտեսավարող սուբյեկտների՝ ապրանքային շուկայում ունեցած մասնաբաժինների որոշում:

Վերոնշյալ կարգավորումների լույսի ներքո անդրադառնալով գործի փաստերին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

***<u>Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը.</u>***

ՀՀ ներմուծվող և շրջանառվող բենզինի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 826 որոշմամբ հաստատված «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին և մազութին ներկայացվող պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 013/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**):

Կանոնակարգի համաձայն՝ ավտոմոբիլային բենզինի նշագիրը ներառում է որոշակի հաջորդականությամբ դասավորված՝ գծիկով միացված նշանների հետևյալ խմբերը՝

- Առաջին խումբ. ԱԻ տառերը, որոնք նշանակում են ավտոմոբիլային բենզին,
- Երկրորդ խումբ. ավտոմոբիլային բենզինի՝ հետազոտական մեթոդով որոշված օկտանային թվի թվային նշագիրը (80, 92, 93, 95, 96, 98 և այլն),
- Երրորդ խումբ. ավտոմոբիլային բենզինի էկոլոգիական դասը նշող K2, K3, K4, K5 պայմանանշանները:

Ավտոմոբիլային բենզինի բոլոր տեսակները միմյանց փոխադարձ փոխարինելի են, քանի որ ֆունկցիոնալ փոխարինելիությունը (սպառման նպատակը) նույնն է, համադրելի են նաև ֆիզիկական և որակական բնորոշիչները: Շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտները չեն զբաղվում միայն որևէ մեկ տեսակի բենզինի ներկրմամբ, այլ ներկրում են տարբեր տեսակի բենզին:

Ֆունկցիոնալ փոխարինելիության առումով սեղմված գազը, բենզինը և հեղուկ գազը կարող են հանդիսանալ փոխադարձ փոխարինելի ապրանքներ, սակայն վերջիններս տարբերվում են գնային առումով, և հենց սա էլ ի սկզբանե կողմնորոշիչ ազդեցություն է ունենում սպառողների համար: Մասնավորապես, սպառողները ի սկզբանե ընտրություն են կատարում՝ որպես մեքենայի վառելանյութ օգտագործել բենզին, սեղմված բնական գազ, թե հեղուկ գազ՝ ինչից ելնելով էլ կատարում են լրացուցիչ ծախսեր և համապատասխան գազաբալոններ տեղադրում, ինչը հետագայում փոփոխելը նույնպես կապված է լրացուցիչ ծախսերի հետ: Ուստի սպառողները սկզբնական ընտրություն կատարելիս հաշվի են առնում նաև իրենց ընտրած վառելանյութի հետագա հնարավոր գնային փոփոխությունների ազդեցությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը Վարույթի շրջանակում դիտարկել է «Բենզին» ապրանքային շուկան: «Բենզին» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ավտոմոբիլային բենզինի ամբողջ տեսականին է:

***<u>Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը.</u>***

Օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝ որոշակի

աշխարհագրական տարածք է (այդ թվում՝ ճանապարհի, երթուղի՝ օդային, ջրային, ցամաքային և այլն), որի շրջանակներում գնորդի համար տնտեսապես հնարավոր ու նպատակահարմար է ձեռք բերել տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքները և առկա չէ այդ հնարավորությունն ու նպատակահարմարությունը տվյալ տարածքից դուրս: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը կարող է ներառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը կամ դրա մի մասը կամ Հայաստանի Հանրապետության (կամ դրա մի մասի) և այլ պետության (կամ դրա մի մասի) տարածքը:

«Բենզին» ապրանքային շուկայի ապրանքատեսակները առկա են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում առանց սահմանափակման, առանց ապրանքի որակի և սպառողական հատկանիշների կորուստների, և գնորդների համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում մատչելի են հավասարապես: Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Բենզին» ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքն է:

***<u>Ապրանքային շուկայի ուսումնասիրվող ժամանակահատվածը.</u>***

Օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածը այն ժամանակահատվածն է (օր, ամիս, տարի), որի շրջանակում ուսումնասիրվում է ապրանքային շուկան:

Վարույթի շրջանակում Հանձնաժողովը դիտարկել է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածը:

***<u>Ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը և ծավալը.</u>***

Օրենքի 3-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի սուբյեկտներն են տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներն իրացնողը, արտադրողը կամ ձեռք բերողը:

Ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ ներմուծվող բենզինի հիմնական մասը (2023 թվականին՝ 99 տոկոս) ներմուծվել է Ընկերությունների կողմից: Ընկերությունները միաժամանակ գործում են բենզինի իրացման ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ մակարդակներում: Ուստի, հաշվի առնելով Ընկերությունների հնարավորությունը որոշիչ ազդեցություն ունենալու բենզինի իրացման ոլորտում, կարևորվում է դիտարկել Ընկերությունների գործունեությունը և վարքագիծը ինչպես բենզինի մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման մակարդակներում:

Աղյուսակ 3-ում ներկայացված է Ընկերությունների կողմից ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ եղանակով իրացված բենզինի ծավալը և նրանց մասնաբաժինները ներմուծված բենզինի առաջնային իրացման մեջ՝ Դիտարկվող ժամանակահատվածի համար, իսկ Աղյուսակ 4-ում՝ նույն տվյալները ԱԻ-92 տեսակի բենզինի համար:

*<u>Աղյուսակ 3</u>*

**2022-2023 թվականներին ներմուծված բենզինի իրացումների վերաբերյալ**[4]

| Հ/հ | Տնտեսավարող սուբյեկտ | Իրացման ծավալ /հազար լիտր/ | | Մասնաբաժին | |
|---|---|---|---|---|---|
| | | 2022 | 2023 | 2022 | 2023 |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| | | | | | |
| Ընդամենը | | | | 100% | 100% |

*<u>Աղյուսակ 4</u>*

**2022-2023 թվականներին ՀՀ ներմուծված ԱԻ-92 տեսակի բենզինի իրացման ծավալների և տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինների վերաբերյալ**

| Հ/հ | Տնտեսավարող սուբյեկտ | Իրացման ծավալ /հազար լիտր/ | | Մասնաբաժին | |
|---|---|---|---|---|---|
| | | 2022 | 2023 | 2022 | 2023 |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| Այլ | | | | | |
| Ընդամենը | | | | 100% | 100% |

Վարույթի շրջանակում ապրանքային շուկայի հատկորոշման վերաբերյալ արձանագրումներն իրականացվել են գործում առկա տվյալների հիման վրա, ինչը չի բացառում Հանձնաժողովի կողմից այլ վարույթների շրջանակում ապրանքային շուկայի այլ բնութագրում իրականացնելու հնարավորությունը:

***<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Սի Փի Էս էներջի Գրուպ», «Ֆլեշ» և «Մեգա Թրեյդ» ընկերությունները իրականացնում են բենզինի ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացում, իսկ «Մաքս Օիլ» ընկերությունը՝ միայն մեծածախ իրացում: Միևնույն ժամանակ «Մաքս Օիլ» ընկերությունը և բենզինի մանրածախ իրացման ոլորտում գործող «Կամօյլ» ընկերությունը Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով կազմում են անձանց խումբ հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է,

[4] Դիտարկվել է Ընկերությունների ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացումները:

որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է սահմանված պայմաններից առնվազն մեկը, այդ թվում՝ կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն առնվազն մեկ տարի իրականացնում է կազմակերպությունների միանձնյա գործադիր մարմինների իրավասությունները:

Այսպես, «Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրենը, 2017 թվականից նույն անձն է. Կամո Ռաֆիկի Մելքոնյան:

Միաժամանակ «Կամօյլ» ընկերությունը բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ իրացման կետերում վաճառքն իրականացնում է «Մաքս Օիլ» ընկերության կողմից գրանցված ապրանքային նշանի ներքո:

Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերությունների կողմից իրացված Աի-92 տեսակի բենզինի իրացման գները (ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ) փոփոխվել են միմյանց համահունչ (տե՛ս՝ Գծապատկեր 1 և Գծապատկեր 2):

Ընկերությունների կողմից Դիտարկվող ժամանակահատվածում իրացված Աի-92 տեսակի բենզինի մեծածախ և մանրածախ իրացման գների հիմնավորվածությունը պարզելու նպատակով դիտարկվել է Ընկերությունների կողմից միավոր լիտր Ա-92 տեսակի բենզինի իրացման համար կատարված ծախսերը՝ ամսական կտրվածքով՝ Դիտարկվող ժամանակահատվածի համար: Անհրաժեշտ ծախսերի գնահատման նպատակով Հանձնաժողովը կիրառել է միջին ընդհանուր ծախսի մեթոդը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ATC}=\frac{C_{total}}{Q_{total}}$$

որտեղ.

**ATC** – միջին ընդհանուր ծախսն է,

$C_{total}$ – հնարավոր իրավախախտման առարկա հանդիսացող ապրանքների ամբողջ ծախսերի գումարն է,

$Q_{total}$ – հնարավոր իրավախախտման առարկա հանդիսացող ապրանքների արտադրության (իրացման, ներմուծման) ընդհանուր քանակն է:

Անհրաժեշտ ծախսերի հաշվակման համար Հանձնաժողովի կողմից որպես փոփոխուն են դիտարկվել հետևյալ ծախսերը.

1. Ձեռքբերման արժեք, որը կարող է փոփոխվել ձեռքբերված յուրաքանչյուր խմբաքանակի համար,

2. ՀՀ տարածքում փոխադրման և էքսպեդիտորական ծախսեր,

3. Ակցիզային հարկ. ներմուծվող բենզինի արժեքով պայմանավորված, միավոր լիտր բենզինի համար վճարված ակցիզային հարկը կարող է փոփոխվել[5]:

4. Բնապահպանական հարկ. «Հարկային օրենսգրքի» համաձայն՝ հաշվարկվում է 2 տոկոս դրույքաչափով՝ հարկման բազայի նկատմամբ:

Հանձնաժողովի կողմից որպես հաստատուն ծախսեր են դիտարկվել աշխատավարձը, վարչական այլ ծախսերը, ֆինանսական ծախսերը, պահպանման ծախսերը, ամորտիզացիոն ծախսերը, բենզալցակայանների շահագործման ծախսերը, այլ ծախսերը և կորուստները:

Հանձնաժողովը մեծածախ իրացված Աի-92 տեսակի բենզինի ինքնարժեքի հաշվարկման համար դիտարկել է բոլոր ծախսերը՝ բացառությամբ բենզալցակայանների վարձակալության և շահագործման համար կատարված ծախսերի: Մանրածախ իրացման ինքնարժեքի հաշվարկման համար մեծածախ իրացման ինքնարժեքին ավելացվել են բենզալցակայանների վարձակալության և շահագործման համար կատարված ծախսերը:

Բենզինի բոլոր տեսակների և դիզելային վառելիքի համար ընդհանուր ծախս (common cost) են դիտարկվել փոխադրման և էքսպեդիտորական ծախսերը, աշխատավարձը, վարչական այլ ծախսերը, ֆինանսական ծախսերը, պահպանման ծախսերը, ամորտիզացիոն ծախսերը, բենզալցակայանների վարձակալության և շահագործման ծախսերը և այլ ծախսերը: Որպես Աի-92 տեսակի բենզինի համար կատարված ուղղակի ծախս է դիտարկվել ձեռքբերման արժեքը, ակցիզային հարկը, բնապահպանական հարկը և կորուստները:

Աղյուսակ 5-ից Աղյուսակ 9-ում ներկայացված է տնտեսավարող սուբյեկտների կողմից իրացված Աի-92 տեսակի բենզինի իրացման առնչությամբ տվյալները, ինչպես նաև իրացված բենզինին առնչվող ծախսերը՝ ըստ առանձին հոդվածների:

***«Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.***

---

[5] *Մասնավորապես, «Հարկային օրենսգրքի» համաձայն՝ 2022 և 2023 թվականներին ակցիզային հարկի դրույքաչափը սահմանված է եղել 1 տոննայի համար 40 000 դրամ, իսկ ակցիզային հարկի հաշվարկման գործակիցը 2022 թվականին՝ 1,06, 2023 թվականին՝ 1,09: Այսինքն, ստացվում է, որ 2022 թվականին 1 տոննա բենզինի համար սահմանված է եղել **42 400** դրամ ակցիզային հարկ, իսկ 2023 թվակնին՝ **43 600** դրամ:*

*Միևնույն ժամանակ մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 135 000 դրամի և յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալից պակաս լինելու դեպքում (2022 թվականի համար **143 100 դրամ**, իսկ 2023 թվականի համար **147 150 դրամ**) ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 135 000 դրամի և յուրաքանչյուր տարվա համար սահմանված՝ ակցիզային հարկի հաշվարկման գործակցի արտադրյալին:*

*Աղյուսակ 5*

***«Սի Փի Էս Էներջի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.***

***Աղյուսակ 6***

**_Աղյուսակ 7_**

***Աղյուսակ 8***

***«Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն***

***<u>Աղյուսակ 9</u>***

***4.4. Ընկերությունների ծախսերի և իրացումների վերաբերյալ.***

Աղյուսակ 5-ից Աղյուսակ 9-ի տվյալներից երևում է, որ Ընկերությունների կողմից ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ եղանակով իրացված ԱԻ-92 տեսակի բենզինի համար կատարված ընդհանուր ծախսերը որոշ ամիսներին գերազանցել են բենզինի իրացման գներին, իսկ որոշ ամիսներին՝ Ընկերությունները ապահովել են 1 լիտրի հաշվով մեծածախ իրացման դեպքում մինչև 81 դրամ շահույթ, մանրածախ իրացման դեպքում՝ մինչև 94 դրամ շահույթ:

ԱԻ-92 տեսակի բենզինի իրացմանն ուղղված ընդհանուր ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ընկերությունների առանձին ծախսային հոդվածներ (միավոր լիտրի հաշվով) էականորեն տարբերվում են միմյանցից: Աղյուսակ 10-ում ներկայացված են Ընկերությունների միջին տարեկան ծախսերը՝ ըստ առանձին հոդվածների՝ միավոր լիտր ԱԻ-92 տեսակի բենզինի համար:

*<u>Աղյուսակ 10</u>*

**Ընկերությունների կողմից 2022-2023 թվականներին մանրածախ եղանակով իրացվող 1 լիտր ԱԻ-92 տեսակի բենզինին առնչվող միջին տարեկան ծախսեր՝ ըստ հոդվածների**[6]

| Ծախսի տեսակ | | 2022 | | | | 2023 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սի Փի Էս Էներջի Գրուպ ՍՊԸ | Ֆլեշ ՍՊԸ | Մեգա Թրեյդ ՍՊԸ | Մաքս Օիլ ՍՊԸ | Սի Փի Էս Էներջի Գրուպ ՍՊԸ | Ֆլեշ ՍՊԸ | Մեգա Թրեյդ ՍՊԸ | Մաքս Օիլ ՍՊԸ |
| Հաստատուն ծախսեր | Աշխատավարձ | | | | | | | | |
| | Վարչական այլ ծախսեր | | | | | | | | |
| | Ֆինանսական ծախսեր | | | | | | | | |
| | Պահպանման ծախսեր | | | | | | | | |
| | Ամորտիզացիոն ծախսեր | | | | | | | | |
| | Բենզալցակայանների վարձակալության և շահագործման ծախսեր | | | | | | | | |
| | Այլ ծախսեր | | | | | | | | |
| | Կորուստներ | | | | | | | | |
| Փոփոխուն ծախսեր /միջին կշռված/ | Ձեռքբերման միջին գին /ներմուծում և ՀՀ տարածքից ձեռքբերում/ | | | | | | | | |
| | Փոխադրման ծախս | | | | | | | | |
| | Ակցիզային հարկ | | | | | | | | |
| | Բնապահպանական հարկ | | | | | | | | |
| Ընդամենը հաստատուն ծախսեր | | | | | | | | | |
| Ընդամենը ծախսեր | | | | | | | | | |

6

Միավոր լիտր Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացմանն ուղղված միջին ընդհանուր ծախսերը «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» և «Մաքս Օիլ» ընկերությունների մոտ 2022 թվականին համապատասխանաբար կազմել են դրամ, իսկ 2023 թվականին՝ դրամ: Ընդ որում, առանձին ծախսային հոդվածները Ընկերությունների մոտ էապես տարբերվում են:

Այսպիսով, ստացվում է, որ Ընկերությունները 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին միավոր լիտր Աի-92 տեսակի բենզինի համար կատարելով տարբեր ծախսեր՝ այնուամենայնիվ վարել են միանման գնային քաղաքականություն, ընդ որում, Ընկերությունների կողմից իրացման գների փոփոխությունները չեն հիմնավորվում տնտեսական պայմանների փոփոխությամբ: Մասնավորապես՝ Ընկերությունների մոտ առկա են դեպքեր, երբ ինքնարժեքի բարձրացումը զուգակցվում է իրացման գնի իջեցմամբ և հակառակը:

<u>*Աղյուսակ 11*</u>

**Տնտեսավարող սուբյեկտների կողմից 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարված ծախսերի և մանրածախ իրացման գների վերաբերյալ**

| Տարի | Ամիս | Ինքնարժեք | | | | Մանրածախ իրացման միջին գին /առանց ԱԱՀ/ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Ֆլեշ» ՍՊԸ | «Մեգա Թրեյդ» ՍՊԸ | «Կամօյլ» ՍՊԸ | «Սի Փի Էս Էներջի Գրուպ» | «Ֆլեշ» ՍՊԸ | «Մեգա Թրեյդ» ՍՊԸ | «Կամօյլ» ՍՊԸ | «Սի Փի Էս Էներջի Գրուպ» |
| 2022 | հոկտեմբեր | | | | | 411 | 403 | 411 | 411 |
| | նոյեմբեր | | | | | 396 | 388 | 395 | 397 |
| | դեկտեմբեր | | | | | 339 | 335 | 334 | 333 |
| 2023 | օգոստոս | | | | | 397 | 391 | 396 | 395 |
| | սեպտեմբեր | | | | | 421 | 415 | 421 | 422 |
| | հոկտեմբեր | | | | | 444 | 437 | 444 | 445 |

Աղյուսակ 11-ում ներկայացված են 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Աի-92 տեսակի բենզինի իրացման նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից կատարված ծախսերը և համապատասխանաբար վերջիններիս կողմից իրացված Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գները (առանց ավելացված արժեքի հարկի): Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 11-ի տվյալներից՝ տնտեսավարող սուբյեկտների մանրածախ իրացման միջին գները գրեթե նույնական են եղել այն դեպքում, երբ ինքնարժեքը էապես տարբերվել է տնտեսավարող սուբյեկտների մոտ: Օրինակ՝ 2022 թվականի նոյեմբեր ամսին «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», «Կամօյլ» և «Սի Փի Էս Էներջի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման միջին գինը՝ առանց ԱԱՀ, կազմել է համապատասխանաբար 396 դրամ, 388 դրամ, 395 դրամ և 397 դրամ, այսինքն՝ մանրածախ իրացման միջին գինը դիտարկված տնտեսավարող սուբյեկտների մոտ գրեթե նույնական է եղել՝ առավելագույնը 9 դրամ տարբերությամբ: Միևնույն ժամանակ

տնտեսավարող սուբյեկտների ինքնարժեքը 1 լիտրի հաշվով նշված ամսին կազմել է համապատասխանաբար , այսինքն՝ առկա է եղել մինչև 81 դրամ տարբերություն:

Նմանատիպ պատկեր կարող ենք տեսնել նաև Աղյուսակ 11-ում նշված մնացած ամիսներին:

Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ընկերությունները միավոր լիտր ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման նպատակով կիրառել են միևնույն գները և գնային փոփոխությունները կատարել են նույն օրը կամ մինչև երկու օրվա տարբերությամբ (տե՛ս՝ Աղյուսակ 12):

*Աղյուսակ 12*

**Տնտեսավարող սուբյեկտների կողմից 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին միավոր լիտր ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման գների վերաբերյալ (դրամ, ներառյալ ԱԱՀ)**

| «Կամօյլ» ՍՊԸ | | «Մեգա Թրեյդ» ՍՊԸ | | «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ՍՊԸ | | «Ֆլեշ» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին | Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին | Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին | Ամսաթիվ | Միավոր լիտրի մանրածախ իրացման գին |
| 25.11.2022 | 450 | 25.11.2022 | 450 | 27.11.2022 | 450 | 26.11.2022 | 450 |
| 02.12.2022 | 430 | 02.12.2022 | 430 | 03.12.2022 | 430 | 02.12.2022 | 430 |
| 23.12.2022 | 390 | 23.12.2022 | 390 | 24.12.2022 | 390 | 24.12.2022 | 390 |
| 01.09.2023 | 490 | 01.09.2023 | 490 | 01.09.2023 | 490 | 01.09.2023 | 490 |
| 07.09.2023 | 510 | 08.09.2023 | 510 | 08.09.2023 | 510 | 08.09.2023 | 510 |
| 06.10.2023 | 540 | 06.10.2023 | 540 | 06.10.2023 | 540 | 08.10.2023 | 540 |

Ընդ որում, եթե 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին համեմատենք յուրաքանչյուր ընկերության միջին ամսական ինքնարժեքի փոփոխությունը մանրածախ իրացման միջին գնի փոփոխություն հետ, ապա կտեսնենք, որ Ընկերությունների իրացման միջին գների փոփոխությունը չի համապատասխանել միջին ինքնարժեքի փոփոխությանը, այսինքն՝ գնային փոփոխությունները պայմանավորված են եղել ոչ թե տնտեսական պայմանների փոփոխությամբ, այլ կրել են համաձայնեցված բնույթ (տես՝ Աղյուսակ 13):

*Աղյուսակ 13*

**2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ընկերությունների միջին ինքնարժեքի և մանրածախ իրացման միջին գների փոփոխությունների վերաբերյալ**

| Հ/հ | Տնտեսավարող սուբյեկտ | 2022 թվական | | | | 2023 թվական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հոկտեմբեր-նոյեմբեր | | նոյեմբեր-դեկտեմբեր | | օգոստոս-սեպտեմբեր | | սեպտեմբեր- հոկտեմբեր | |
| | | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն | ինքնարժեքի փոփոխություն | իրացման միջին գնի փոփոխություն |
| 1 | Ֆլեշ ՍՊԸ | -8 | -15 | -47 | -56 | 29 | 24 | -42 | 24 |
| 2 | Մեգա Թրեյդ | -7 | -15 | -13 | -53 | 36 | 24 | 32 | 22 |
| 3 | Սի Փի Էս Էներջի Գրուպ | -36 | -15 | -45 | -64 | -12 | 26 | -17 | 24 |
| 4 | Կամօյլ | -11 | -16 | -47 | -61 | 26 | 25 | 27 | 22 |

Աղյուսակ 13-ի տվյալներից տեսնում ենք, որ օրինակ 2022 թվականի նոյեմբեր ամսին հոկտեմբեր ամսվա համեմատ Ընկերությունների միջին ամսական մանրածախ գները նվազել են համապատասխանաբար 15, 15, 15 և 16 դրամով, մինչդեռ նշված ժամանակահատվածում Ընկերությունների միջին ինքնարժեքները նվազել են 8, 7, 36 և 11 դրամով:

Այսպիսով՝ Ընկերությունների կողմից ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացումների համար վարած գնային քաղաքականությունն իրացմանն ուղղված ծախսերի հաշվառմամբ տնտեսապես հիմնավորված չեն:

***Երրորդ հարցադրման կապակցությամբ.***

Վարույթով քննարկվում է Ընկերությունների կողմից հակամրցակցային համաձայնություն իավախախտման հատկանիշների առկայության հարցը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է, նախևառաջ, քննարկել Ընկերությունների գործողություններում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հատկանիշների առկայությունը:

Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը՝ 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ընկերությունների կողմից ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ միջին ամսական իրացման գների փոփոխությունները պայմանավորված չեն եղել տնտեսական պայմանների փոփոխությամբ, մասնավորապես՝ իրացման գների փոփոխությունները չեն համապատասխանել իրացման համար կատարված անհրաժեշտ ծախսերի գումարի փոփոխություններին:

Սույն գործով ձեռք բերված տեղեկատվության այլ ապացույցների հետազոտման և գնահատման, ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում հաստատվում է.

1. Ընկերությունները հանդիսանում են բենզինի շուկայում հիմնական ներմուծում իրականացնող ընկերություններ, որոնք գործում են թե՛ մանրածախ և, թե՛ մեծածախ շուկաներում:

2. Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծված բենզինի 70-80 տոկոսը կազմել է ԱԻ-92 տեսակի բենզինը: ԱԻ-92 տեսակի բենզինի զգալի մասը ներմուծվել է Ընկերությունների կողմից:

3. Ընկերությունների կողմից ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացումների համար սահմանված գները իրացմանն ուղղված ծախսերի հաշվառմամբ տնտեսապես հիմնավորված չեն:

4. Ընկերությունները գործունեություն են իրականացնում նույն ապրանքային շուկայում, հանդիսանում են մրցակիցներ, որպիսի պայմաններում իրականացրել են ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ գների համանման փոփոխություններ, որոնք պայմանավորված չեն եղել տնտեսական գործոններով:

5. Ընկերությունները 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱԻ-92 տեսակի բենզինի մանրածախ իրացումների ընթացքում՝ տարբեր ծախսային կառուցվածքի պայմաններում վարել են նույնական գնային քաղաքականություն՝ գների չհիմնավորված իջեցում և բարձրացում:

Այսպիսով, 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ընկերությունները տարբեր ծախսային կառուցվածքի պայմաններում Աի-92 տեսակի բենզինի մանրածախ իրացման գները չհիմնավորված բարձրացրել և իջեցրել են՝ գործելով համաձայնեցված:

Ինչ վերաբերում է Ընկերությունների դիրքորոշումներին, ապա Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Այսպիսով՝ 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում Ընկերությունների՝ տարբեր ծախսային կառուցվածքի պայմաններում ԱԻ-92 տեսակի բենզինի իրացման գնի բարձրացման, իջեցման, ինչպես նաև սահմանման առնչությամբ անուղղակի համաձայնեցված վարքագիծը պարունակում է հորիզոնական հակամրցակցային համաձայնության կնքմամբ Օրենքի խախտման հատկանիշներ:

***2) «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» ընկերությունների և Անձանց խմբի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ անձանց խմբի կողմից օրենքի խախտման համար սույն հոդվածով նախատեսված տուգանքը նշանակվում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում, և տուգանքը հաշվարկվում է այդ տնտեսավարող սուբյեկտների հասույթների ընդհանուր գումարից:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ թիվ 395-Ն որոշում) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ Մեթոդաբանություն) 1-ին կետի համաձայն՝

պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

S = Բ + Բ x ( Ծ - Մ)

Որտեղ՝

S-ն տուգանքի չափն է.

Բ-ն տուգանքի բազային գումարն է.

Ծ-ն ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է.

Մ-ն մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 11-րդ կետի 1-ին ենթակետի «ա» մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնության կնքումը (կայացումը, այդ համաձայնությանը մասնակցությունը) առաջին խումբ իրավախախտում է հանդիսանում:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ առաջին խումբ իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ **ապրանքների իրացումից ստացված հասույթ** է համարվում համապատասխան ժամանակահատվածում ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ **համապատասխան ժամանակահատվածը** Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ

հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ **նախորդող տարին** տվյալ տարվան նախորդող տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ անձանց խմբի կողմից Օրենքի խախտման համար նախատեսված տուգանքը նշանակվում և հաշվարկվում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակվող տուգանքի բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր հասույթի կամ ապրանքի իրացումից ստացված հասույթի հանրագումարը, իսկ ծանրացնող և մեղմացնող հանգամանքների առկայության փաստի հաստատման համար հիմք է ընդունվում տնտեսավարող սուբյեկտներից առնվազն մեկի մոտ նշված հանգամանքների առկայության փաստի հաստատումը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ իրավախախտումը տեղի է ունեցել 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերությունների հասույթը Աի-92 տեսակի բենզինի իրացումից ներկայացված է ստորև.

| **Աի-92 տեսակի բենզինի իրացումից ստացված հասույթ /ՀՀ դրամ/** | | |
|---|---|---|
| **Տնտեսավարող սուբյեկտ** | **2022 թվական** | **2023 թվական** |
| **«Սի Փի Էս Էներջի Գրուպ» ՍՊԸ** | | |
| **«Ֆլեշ» ՍՊԸ** | | |
| **«Մեգա Թրեյդ» ՍՊԸ** | | |
| **«Մաքս Օիլ» ՍՊԸ** | | |
| **«Կամօյլ» ՍՊԸ** | | |

*Իրավախախտման ծանրության խումբը.*

Մեթոդաբանության 18-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը, այդ համաձայնությանը մասնակցելը) հանդիսանում է առանձնապես ծանր իրավախախտում և կիրառվում է 8 տոկոս դրույքաչափ:

*Իրավախախտման տևողությունը.*

Մեթոդաբանության 19-րդ կետի համաձայն՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է Ժ=Ա/12 բանաձևով, որտեղ Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է, իսկ Ա-ն դիտարկվող ժամանակահատվածն է:

Վարույթի շրջանակում քննարկվող իրավախախտման սկզբնաժամկետն է 2022 թվականի նոյեմբեր ամիսը, իսկ վերջնաժամկետը՝ 2023 թվականի հոկտեմբեր ամիսը:

Նման պայմաններում իրավախախտման մեջ ներգրավված ընկերությունների կողմից իրավախախտման ժամանակահատվածը գնահատվում է 4 ամիս՝ 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, հետևաբար, հիմք ընդունելով Մեթոդաբանության 23-րդ կետը՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1:

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

Մեթոդաբանության 43-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում ու վարչական ակտում արտացոլում է միայն այն ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 44-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 29-30-րդ և 39-40-րդ կետերով սահմանված են առաջին խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

***3) Ընկերություններին հանձնարարություն փալու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ դեպքում Վարույթի շրջանակներում որպես իրավախախտում է որակվել 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում Ընկերությունների վարքագիծը, հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***6. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ», սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և ««Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ» անձանց խմբի կողմից 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տարբեր ծախսային կառուցվածքի պայմաններում Աի-92 տեսակի բենզինի իրացման գնի բարձրացման, իջեցման, ինչպես նաև սահմանման առնչությամբ անուղղակի համաձայնեցված վարքագիծը որակել որպես հորիզոնական հակամրցակցային համաձայնություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերության նկատմամբ նշանակել 392 484 000 (երեք հարյուր իննսուներկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Օրենքի խախտման համար «Ֆլեշ» ընկերության նկատմամբ նշանակել 324 110 000 (երեք հարյուր քսանչորս միլիոն հարյուր տասը հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

4. Օրենքի խախտման համար «Մեգա Թրեյդ» ընկերության նկատմամբ նշանակել 206 223 000 (երկու հարյուր վեց միլիոն երկու հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

5. Օրենքի խախտման համար ««Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ» անձանց խմբի նկատմամբ նշանակել

155 546 000 (հարյուր հիսունհինգ միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

6. Սույն որոշումը յուրաքանչյուրի հասցեատիրոջ նկատմամբ իր մասով ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Սի Փի Էս Էներջի Գրուպ», «Ֆլեշ», «Մեգա Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին և ««Մաքս Օիլ» և «Կամօյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ» անձանց խմբին հանձնելուն հաջորդող օրվանից:

7. Սույն որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

8. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 10

Երևան